



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հ. Ա. Խ. Հ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԻԹՅԱՆ

(1928/29—1932/33 թ. թ.)

ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

—

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1930

222  
222  
222

ՀՐ. ԱՐԴՅՈՒՆ

338.1(4)

Ա


Հ. Ա. Խ. Հ.

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԻԹՅԱՆ**

(1928/29 – 1932/33 թ. թ.)

**ՀԵԳԱՄՑԱ ՊԼԱՆԸ**

~~10273~~  
A I 3835



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1980

Հրատ. № 1228

Գրառ. № 4029 (ը.) Պատ. № 257. Տիրաժ 3000

Գետհրատի շ-ըդ տպարան Յերևանում

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՒԶԵՒ 1928 թ.

I. ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՀԵՏԱ-  
ԳԱ ԱՆԿՈՒՄԸ

Դյաւզատնտեսությունը հայաստանում հանդիսացել է և մինչև այժմ ել հանդիսանում ե ժողովրդական անաեսության գլխավոր ճյուղը, քանի վոր նա ըստ արժեքի Յ անգամ ավելի արտադրանք ե տալիս, քան արդյունաբերությունը։ Ցեվ այդ հասկանալի յեւ։

Ցարական ինքնակալության գաղութային քաղաքականությամբ հայաստանի պես մի ծայրագավառում խոշոր արդյունաբերություն չպիտի ստեղծվեր։ Թույլ զարգացած քաղաքային կլսնը, առևտուրական կապերի բացակայությունը և տնաենության ազ ճյուղերն իրենց հետամնացությամբ նույնպես աշխատանքի գործադրության լայն ասպարենգ չերին։ Բնական ե ուրեմն, վոր բնակչության ճնշող մեծամամությունը ( $90^{\circ}/\circ$  ից ավելին) ապրուստ հայթայթելու համար պետք ե դիմեր գյուղատնտեսությանը։

Հեռու դանվելով խոշոր շուկաներից ու  
զուրկ հաղորդակցության հարմար ճանապարհ-  
ներից, այն ել Հայաստանի սեղագրական բարդ  
պայմաններում, գյուղացիությունը սահմանա-  
փակվում եր գյուղատնտեսության միայն այն  
ճյուղերով, վորոնք բավարարուժ ելին նրա ան-  
միջական ս զառսղական կարիքները։ Զբաղվում  
ելին գերազանցազես հացաբույսերի մշակու-  
թյամբ ու եքստենսիվ անամնապահությամբ։

Միայն ներկա դարու սկզբից, յերբ կառաւց-  
վեց Թիֆլիս—Զուլֆա յերկաթուղագիծը, միքա-  
նի գլխավոր ուղղություններով խճուղիներ անց-  
կացրին. հաղորդակցությունը հեշտացավ և գյու-  
ղատնտեսական արտադրության մեջ զգալի բե-  
կում առաջ յեկավ։

Մի կողմից հնարավոր ե դառնում վորոշ  
չափով ներգրավել Հայաստանի գյուղատնտե-  
սության արտադրանքն ապրանքավիճ շրջանա-  
ռության մեջ. իսկ մյուս կողմից մատչելի ին ն  
դառնում մոտակա և հեռավոր շուկաները—Թիֆ-  
լիսի սպառողական շուկան, Ռուսաստանի շու-  
կան և մասնավորապես տեքստիլ արդյունաբե-  
րությունը։

Այդ կտրեսը պատճառների գրդմամբ Հա-  
յաստանում սկսում են զարգանալ բամբակագոր-  
ծությունը, խաղողաբուծությունը։ Գինեգործու-

թիւնը և Թիֆլիսի շուկայի մոտակա շրջանի՝ Լոռու անասնապահությունը։ Հեղտանում ե Ռուսաստանից գործարանալին ապրանքների և հացի ներմուծումը, իսկ հայաստանից՝ բամբակի, գինեմթերքների, անասունների, ձվի, կարտոֆիլի և այլ մթերքների արտահանումը։ Այդպիսով, հաստատվում ե կանոնավոր ապրանքափոխանակություն, վորը մեծապես նպաստում ե զյուղատնտեսության զարգացմանը։

Սակայն լոկ շուկայի տարերքը չեր կարող վճռական դեր խաղալ գյուղատնտեսության հարատև աճման ու զարգացման համար, իսկ ներքին տեխնիկա. անտեսական բազայի ուժեղացման և ամրացման խնդիրների վրա անհրաժեշտ ուշադրություն չեր դարձվում։

Ցեվ դեռ համաշխարհային պատերազմից միքանի տարի առաջ սկսում ե նկատվել գյուղատնտեսության զարգացման թափի դանդաղում։ Հողասակավությունն ավելի սուր բնույթ ե ստանում. վոռոգման սահմանափակ միջոցները արդեն վորոշակի կերպով զգալ են տակիս բամբակի ցանքսերի ու խաղողի այգիների հետագա ընդարձակման դժվարություններն առանց հիմնական ջրաշխնարարական-մելիորատիվ աշխատանքների. անասունների աճումը խոչընդուների լե հանդիպում կերի սակավության և ա-

ըստների անկանոն ողտագործելու հետևանքով:

Այդ բոլոր պահանջների համար պետական վճռ մի կազմակերպված ու շատ թե քիչ ծավալուն տեխնիկական ու մասսայական ագրոկուլտուր աշխատանք չեր կատարվում. անտեսավարության ձևերի կատարելագործման և ընդհանրապես գլուղատնահության հետագա զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Նախապատերազման վերջին հնդամյակում ցանքսերի տարածությունը Հայաստանի ներկա սահմաններում հասնում եր (միջին հաշվով) 343,7 հազար հեկտարի, վորի մեջ ամենամեծ տեղը գրավում ենին հացարուկսերը՝ 306,6 հազ. հեկտ., կամ ընդհանուրի 89,3%<sup>0</sup>-ը: Տեխնիկական կուլտուրաներից ամենատարածվածը — բամբակացանքը բանում եր 15,3 հազ. հեկտ. կամ 4,5%<sup>0</sup>: Խաղողի ալգիների տարածությունը կազմում եր 10,6 հազ. հեկտ.: Անառունների թիվը պատերազմից առաջ հասնում եր՝ խոշոր լեղջուրավորներինը 893,0 հազ. գլխի, իսկ մանր լեղջուրավորներինը՝ 1,564,6 հազ. գլխի:

Ենթե դիմենք գլուղատնահության ընդհանուր արտակրանքի արժեքի կազմվածքին, ապա կտեսնենք հետևյալ պատկերը:

Ընդհանուր արտադրանքի արժեքը կազմում

ԵՐ 48,8 միլիոն նախապատերազմիան ռուբլի, վորից բուսաբուծության արտադրանքը 32,3 միլիոն ռուբ. կամ ամբողջի 66,1<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ սրանից մասնավորապես հացաքույսերինը 16,9 միլիոն ռուբլի (3±,6<sup>0</sup>/<sub>0</sub>), բամբակինը՝ 3,2 միլ. ռուբլի (6,4<sup>0</sup>/<sub>0</sub>), խաղողինը՝ 4,4 միլ. ռուբ. (9,0 տոկոս), կենդան աբուծության արտադրանքը՝ 16,5 միլ. ռուբլի (33,8 տոկ.), վորից մասնավորապես անասնապահությանը 14,9 միլ. ռուբ. (30,6 տոկոս):

Հենց թռուցիկ կերպով ծանոթանալով այս թվերին, կարելի լի հանգել այն հիմնական լեզվագացությանը, վոր նույնիսկ նախապատերազմիան «ամենածաղկյալ» վիճակում մեր գլուզատնտեսության սպառողապարենային բնույթը չափազանց ընդոծված եր. այդ կարելի լի տեսնել հացաքույսերի և անասնապահության (վորն իր գերակշռող մասով դեռ պահպանում եր բնամթերացին թեքումը) բացառիկ տեսակաբար կշռից (ամբողջ արտադրանքի 65,2 տոկոսը կամ 2/3 մասը):

\*  
\* \*

Բոլորին հայտնի լի, թե այնուհետեւ համաշխարհակին իւղերիալիստական պատերազմը (1914—17 թ.թ.) ու հետագայի աղքամիջան

կոփմսերը Հայաստանում (1918—20 թ.թ.) ինչպիսի կործանիչ հարգված հասցըին լերկըի ամբողջ տնտեսությանն ու այդ թվում վոչ պակաս չափով և գյուղատնտեսությանը:

Դաշնակցականների ապիկար քաղաքականության հետեանքով ամբողջ լերկիրը 1918թը վեց վերածված եր ռազմադաշտի, Պատերազմի ու ազգամիջյան կոփմսերի հրդեհն ողակել եր վոչ միայն արտաքին՝ Թյուրքիայի, Վրաստանի և Աղրբեջանի սահմանները, վորոնք հետզհետե սղմվում եյին, այլ այդ հրդեհը կատաղությամբ բորբոքվում եր նաև լերկըի ներսում գրեթե ամենուրենք՝ Զանգիբրասարի, Վեդիբասարի, լեռնամասի և այլ շրջաններում։ Հըի, սրի ու թալանի ելին մատնված ընակչությունն ու նրա ունեցվածքը։

Համատարած ավերումների հետեանքները պատկերացնելու համար բավական ե հիշատակել, վոր 1919 թվի տեղեկություններով ցանքսերի ընդհանուր տարածությունը կրճատվել եր ավելի քան 70 տոկոսով։ մասնավորապես բամբակացանքսն իսպառ վերացավ, իսկ իսպողի այդիների՝ ավերածություններից «փրկված» մասը ցրտահարության ու անմշակ մնալու պատճառով բերքից միանգամայն ընկավ։ Զպետք ե մոռանալ նաև, վոր ռազմական իրադարձություն-

ների կործանալու ալիքը բացառիկ ուժնությամբ անցավ Արարատյան ու Շիրակի դաշտերի վրայով, հիմնահատակ անելով գյուղատնտեսության տուավել կուլտուրական հատվածը:

Կոփակների ընթացքում իր յերիտասարդ տարբի զդալի մասը կորցնելուց հետո՝ գաղթված, լքված, հրուծված ու սովասանջկյուղացիությունը բացարձակապես անաղահով վիճակում լինելով, ինարկե չեր կարող տնտեսությունն վարել, մանավանդ, վոր արհավիրքների շարանները շարունակվում երին ու կենդանի ուժի մեջած աշխատունակ մասն ել գտնվում եր դաշնակցական կառավարության բանակում:

Մյուս կողմից, միանդամայն քայքայվել եր գյուղատնտեսության հիմնական արտադրական ֆուղը. գաղթերի հետեւանքով յերեսի վրա թողնը կած հողերը խոպանացել ելին, վոռոգման ցանցը փչացել, շինություններն ավերվել, ինվենտարը մաշվել ու վոշնչացել և բանող անսունների թիվը խիստ կրճատվել եր:

Վերջապես; կտրված լինելով արտաքին աշխարհի անտեսական կյանքից, գյուղացիությունը մտահոգված եր միայն իր Փիզիկական գյության պահպանությամբ:

Այդպիսով Հայաստանի գյուղատնտեսությունը 1919—20 թ.թ. հասավ իր կատարյալ անկման գագաթնակետին:

## 2. «ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆԸ»

Հայաստանի խորհրդայնացումով ու խաղաղության հաստատմամբ վերջ ե տրվում լերկը և անտեսության անկմանը, անհրաժեշտ պայմաններ են ստեղծվում գյուղացիության համար գյուղատնտեսության վերականգնման աշխատանքներին ձեռնամուխ լինելու:

Սկզբնական շրջանում խորհրդային իշխանության հերթական խնդիրներից ամենակարենիության վերականգնումը, վորի համար գլխավոր չափանիշն առայժմ պիտի ծառայեր նախապատերազման արտադրության մակարդակը:

Հենց 1921 թվից կաղմակերպվում են անհրաժեշտ ձեռնարկութերը՝ սերմացվի, լծկանների մատակարարումը, վոռոգման ցանցի կարգավորումը, գաղթած ու տեղահանված գյուղացիության տեղավորումը և այլն: Վերացվում ե ողակութն ու վերահաստատվում են տնտեսական կապերն Անդրկովկասի հարևան և մուսաստանի խորհրդային հանրապետությունների հետ:

Գյուղատնտեսությունը հետզհետե սկսում է նորից իր առաջընթաց շարժումը և արագորեն վերականգնելով, 1928 թվին ընդհանուր առմամբ հասնում ե նախապատերազման մակարդակին:

Այդ ժամանակուշը զարգանը՝ գյուղատնտեսության վերելքի զիստվոր նշաններով ու աբտադրության չափի համեմատականության սկզբունքով մենք անվանում ենք «վերականգնած» շրջան։ Բայց, ինչպես ստորև կտեսնենք, վերոհիշյալ պայմանագրանի բառացի ու անվերապահ ըստոնումը խիստ սխալ կլիներ։

Դառնալով վերականգնած զիստվոր ցուցանիշերին, մենք կստանանք հետեւալ պատկերը։

Պատերազ- 1928 թը Վերակ.  
միջ առաջ վին տոկոս

<b>1.</b>	<b>Ցանքսերի ընդհ.</b>			
	տար. (հազ. հեկտ.)	343,7	335,0	97,5
<b>2.</b>	<b>Խաղողի այդ. տար-</b>			
	րած. (հազ. հեկտ.)	10,6	10,3	97,2
<b>3.</b>	<b>Անաս.քան. (հազ.դլ.)</b>			
	ա) խոշ. յեղջյուրավ.	893,0	898,4	100,7
	բ) մանր յեղջյուր.	1,564,6	1,776,8	113,4
<b>4.</b>	<b>Ընդհ. արտ. արժ.</b>			
	(միլ. նոտիագ. ռ.)	48,8	50,1	102,6
<b>Վորից ա)</b>	<b>բուսաբուծ.</b>	32,3	33,3	103,3
	բ) կենդանաբուծ.	16,5	16,8	101,4

Ուրեմն ցանքսերի ընդհանուր տարածությունը 1928 թվին պակաս է յեղել նախապատերազմյանից միայն  $2,5^{\circ}/_0$  ով (1929 թվին ար-

դեն անցել ե մոտ  $5^0/0$ -ով), անասունների քանակը զերազանցում եւ: Նախապատերազմյանից ավելի յենակ ընդհանուր արտադրանքի արժեքը, (իհարկե միևնույն նախապատերազմյան գներով համեմատած): Ահա թե ինչու յենք ասում վորդլուղատնեսության վերականգնումը 1928թվին ընդհանուր առժամբ ավարտած ենք համարում:

Յեթե մանրամասնությունների մեջ խորանանք՝ վերականգնման ընթացքում ել կհանդիպենք վորոշ շեղումների այս կամ այն կողմից: Որինակ՝ տեխնիկական կուլտուրաները (բաժբակ, ծխախոտ, կոտավճար և այլ ձիթաբույսերը) թե ցանքսի տարածությամբ ու թե արտադրանքով դեռ 1925թվին անցել ելին նախապատերազմյանից  $10^0/0$ -ով, բայց հացահատիկի բերքի սակագության պատճառով մասամբ տեղի տվին վերջիններին (բացի ծխախոտից): Այդեղործությունն ըստ բերքի դեռ հետ ե մնում նախապատերազմանից նորից ցըտահարժան լենթարկված լով 1925թվին, մլուս կողմից ել այս ճյուղի վերականգնման համար բավական տևական ժամանակ ե հարկավոր: Կարութիւնից ցանքսը խոշորագես ընդուրձակվել ե և ներկայումս համար ե նախապատերազմյան տարածության կրկնապատիկին: Զգալի չափով դեռևս նվազ ե ձիյերի քանակը:

Այնուամենայնիվ, ընդհանուր արդյունքները ցուցում են տալիս, վոր գյուղատնտեսությունն անվերաբարձ կերպով նվաճել և նախապատերազմյան արագրական դիրքերը:

Սրանով հանդերձ անհրաժեշտ ե պարզապես ըմբռնել, վոր այս ժամանակաշրջանում մեր գյուղատնտեսության անցած ուղին չի յեղել լոկ վերականգնման ճանապարհ: Խորհրդությն իշխանության համար նախապատերազմյան վիճակը վրապես ինքնանպատակ յերբեք ծառակել չեր կարող: Նոր կյանք կառուցելու համար կոչված հաղթական պըռուետարիատը Հոկտեմբերյան մեծ հեղափոխությամբ հիմնովին խորտակելով հին կարգերն ու անտեսավարության սիստեմը, չեր կարող նորից նույն ճանապարհով ընթանալ: Ծեվ քանակական վերելքին զուղընթաց, վերականգնման շրջանի առաջին խոկ որից առաջադրված ելին մի շարք այլ խնդիրներ, վորոնշիմի առած պիտի նախավարատեսելին գյուղատնտեսության ագրոտեխնիկական, կուլտուրական և սոցիալ-տնտեսական վերակառուցման գործը:

Դեռ 1922 թվից սկսում ե նախնական հողաշխնարարությունը, հիմնովին վերացվում ե կալվածատիրական հողատիրությունը, կատարվում ե հողահավասարեցում, և հողագուբեկադիտական մեծամասնության հոծ բազմությունը մեծամասնու-

թյամք տեղավորվում ու բավարարվում և հողով:

Զեռնարկվում և ավարավում են մի շարք ջրաշինարարական համեմատաբար խոշոր աշխատանքներ (նոր կառուցումներ՝ Մամրիի, Եջմիածնի, Շիրակի ջրանցքները): Լրացվում են արտադրական հիմնական ֆոնզերը:

Ազգուկուլտուր աշխատանքների առաջարիդում պատերազմից առաջ ու ել ավելի նրաընթացքում մեր գյուղատնտեսությունը միանգամաբն չերեսի վրա լեր թողնված: Հատ ու կենտ գյուղատնտեսներից բացի (նրանց թիվը տասկից չեր անցնում), գյուղատնտեսությունը զրեթե ուրիշ վոչ մի ոգնություն չեր ստանում: Հիմնը վելով ու տարեց տարի արագորեն ընդարձակվելով ու խտանալով ագրոկուլտուր և փորձացուցադրական հիմնարկությունների տեղական ցանցն ու անձնակազմը արդեն 1927 թվին արտահայտվում են հետեւյալ թվերով՝ գյուղգործիքների ու մեքենաների վարձակետեր 39, սերմագուման գումակներ 26, բեղմնավորման կայաններ 23, ցուցադրական հողամասեր 502, ողերեսութարաննական կայաններ 38, գավառ. և շրջագրոնոմներ 45, հրահանգիչներ 18 և այլն: Դեռ չենք խօսում կենտրոնական (հանրապետական) գիտական հիմնարկների և բարձր վորակի անձնակազմի, համալսարանի գյուղատնտեսական

Փակուլտետի ու մասնագիտական դպրոցների ցանցի մասին:

Կաղմակերպվում ու աճում և զյուղատընտեսական կոռպերացիոնի սիստեմը, վորը 1928 թվի սկզբին ընդգրկում եր 49,6 հազար զյուղացիական տնտեսություններ. դրանցից 28,6 հազարը գյուղվարկացին ու մնացած 21 հազար տնտեսությունները մասնագիտական և այլ ընկերություններ ելին: Մասսայական կոռպերացմանը զուգընթաց հիմնվում են միքանի խորհրդացին տնտեսություններ և կաղմակերպվում են առաջին կոմմունաներն ու կոլեկտիվ անտեսությունները, վորոնցով սաղմնավորվում ե զյուղատնտեսության ապագայի կարևորագույն հատվածը՝ սոցիալիստական սեկտորը:

Այսպես, 1928 թ. զոյություն ունելին 5 խորհրդային տնտեսություններ միայն՝ զյուղացրեստի գծով և 96 կոլեկտիվ անտեսություններ, վորոնք ընդգրկում ելին 2253 զյուղացիական տնտեսություններ:

Գյուղատնտեսության ինդուստրացման ու մեքենայացման ձեռնարկումները, վորոնք առաջիկայում մեր անելիքների կենարոնական տեղն են բռնելու, նույնպես ծնունդ են առելնախորդ հնգամյակում՝ պանրագործարանների և մի շարք այլ ձեռնարկությունների կառուցումով, տրակ-

տորների (200-ից ավելի) ու մեքենաների ներածումով և այլն:

Յեկ վերականգնման շրջանն ավարտելու պահին, յեթե մեր գյուղատնտեսությունը հասավ նախապատերազմյան արտադրական մակարդակին, ապա իր կազմակերպությամբ, կառուցվածքով ու եյությամբ նա արդեն բոլորովին այլ պատկեր եր ներկայացնում։ մի պատկեր, վորն ըստ բովանդակության միանգամայն անհամեմատելի յե դարձնում գյուղատնտեսության ներկայի վիճակը նախապատերազմյանի հետ։

Անա թե ինչու նախորդ հնգամյակում ապրած շրջանի «վերականգնման» բնույթն ունի միմիայն հարաբերական ու պայմանական իմաստ Թերևս այդ ժամանակաշրջանի նշանակությունն ավելի մեծ ե ստեղծագործական աշխատանք այն բուռն թափով, վորն անհրաժեշտ նախադրյալներ ու հնարավորություններ ե նախապատրաստել՝ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը լայնատարած ճակատով սկսելու համար։

---

~~A~~ ~~3835~~ II. ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ 1928/29 – 32/33  
ԹՎԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ


I. ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՀԽՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հայաստանի հնգամյա պլանի հիմնական խընդիրները բղխում են այն ընդհանուր նպատակադրույթներից, վորոնց վրա կառուցված են և՛ս՝ Միության և Անդրկովկասյան պլանները, սկզբունք ունենալով Խորհրդային Միության ու նրա բաղկացուցիչ մասերի քաղաքական ու տընտեսական միասնականության գաղափարը:

Ի՞նչ հիմնական դրույթների վրա յե կառուցված հնգամյա պլանը:

Ժամանակակից կենտրոնական խնդիրը՝ յերկրի արտադրական ուժերի զարգացումն է, վորով պայմանավորված ե աշխատավորական մասսաների բարեկեցության բարձրացումը։ Գաղտնիք չե, վոր Խորհրդային Միությունը, այդ թըզում նաև Խ. Հայաստանը գտնվում են տնտեսական զարգացման բավական հետամնաց դիրքերում։

Թե մի արտադրական միավորի վրա հաշվենք մի հեկտար ցանքս, մի դլուխ անասուն և



ալին, և թե շնչահասուլթի վերածենք՝ անտեսապես առաջավոր յերկրներում միջին յեկամուտը 2—5 անգամ ավելի լբարձր է, քան մեզնում. այնինչ՝ մեր բնապատմական պայմանները դյուրդատնոեսության զարգացման համար նրանցից շատերի համեմատությամբ թերևս ավելի նպաստավոր են: Ուրեմն, այդ պայմաններն ու բնական տվյալները, կամ ինչպես ասում են՝ յերկրի բնական արտադրական ուժերը, ներկա զեղքում գյուղատնտեսության ասպարիզում, մենք պետք ենք զարգացնենք:

Եեվ հնգամյա պլանի առաջին խնդիրն ե՝ առավելագույն չափով ոգտագործելով նպաստավոր պայմանները, նախագծել արտադրության այնպիսի տեմպ, վորն ըստ հնարավորին ավելի կարճ ժամանակում մոտեցնի մեզ կապիտալիստական առաջավոր յերկրների արտադրական մակարդակին հասնելու բուն նպատակին:

Սակայն լոկ քանակական նվաճումները մեզ չեն կարող բավարարել: Տնտեսության զարգացման աստիճանի կարևոր հատկանիշերից մեկն ել նրա արտադրանքի ելեմենտների փոխհարաբերությունն ու ապրանքային արտադրության գերակշռող դերն ե: Այս տեսակետից պահանջենք զրվում հիմնովին վերափոխել գյուղատնտեսության արտադրական կառուցվածքը և ինքնամ-

վորի բնամթերալին ձևից անցնել ապրանքալին արտադրության ավելի բարձր ձևերին. առ խոսքով ասած, անհրաժեշտ է կատարել արտադրական ուժերի այնպիսի վերադասավորում, վորն առավելագույն չափով համապատասխանի տընտեսության նպատակահարմար կազմակերպման ժամանակից պահանջներին:

Եեվ ինդուստրացման ու ապրանքայնացման լողունգը կարմիր թելով անցնում ե նաև գլուղանտեսության հնգամյա պլանի միջով։ Սա գյուղատնտեսության տնտեսական վերակառուցման դրույթն ե,

Հնգամյա պլանի մյուս առանցքային դրութը՝ գյուղատնտեսության տեխնիկական բազայի վերակառուցման խնդիրն ե։ Առանց բարձր տեխնիկայի հնարավոր չե վոչ միայն սոցիալիզմ կառուցել, այլև համանել առաջավոր լերկրների վորակային ու քանակային նվաճումներին։ Հնգամյա պլանի նախատեսումներն իրագործելու համար անհրաժեշտ է կատարելագործել և ուժեղացնել գյուղատնտեսության զինավորումն ելեկտրիֆիկացիայի ու մեքենայացման միջոցով։

Վերջապես խորհրդալին տնտեսավարության պայմաններում արտադրական ուժերի զարգացման ու վերադասավորման, տեխնիկա-տնտեսական վերտակառուցման խնդիրները սերտորեն

կապվում ու զուգակցվում են համայն տնտեսության սոցիալական վերակազմակերպման պրոբլեմի հետ, առանց փորի տնտեսության առաջևադացումը կկորցներ իր բովանդակությունը, կասինք ավելին՝ նույնիսկ անհնարին կղաւնար սոցիալիզմը կառուցելու դիրեկտիվի իմաստով։ Այդ ասպարիզում հնգամյա պլանը նախատեսում է գյուղատնտեսության մեջ հանրայնացման պրոցեսների ուժեղացումը և սոցիալիստական հատվածի (սեկտորի) ծավալումն ու աճումը։

Այս բոլորն ամփոփելով կարող ենք ասել, վոր գյուղատնտեսության հեռանկարի հիմնական դրույթներն են։

- ա) արտադրական ուժերի զարգացումը,
- բ) սոցիալական վերակազմակերպումը,
- գ) տնտեսական կառուցվածքի վերափոխումը.

դ) տեխնիկայի կատարելագործումն ու կուլտուրական մակարդակի բարձրացումը։

Ահա ընդհանուր ձևակերպումով գյուղատնտեսության վերակառուցման այն գյխավորուղությունները, վորոնք կանխանշված են հնգամյա պլանով։

Այժմ դառնանք հնգամյա պլանի գործնական խնդիրների ու սպասվելիք արդյունքների

ուսումնասիրությանը և տեսնենք, թե ինչպես  
են արտացոլվել նրանց մեջ վերոհիշյալ դրութ-  
ները

## 2.ՏԵՐՐԻՏՈՐԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Դյուղատնտեսության գարգացումը գլխա-  
վորապես հենվում է բնապատմական արտադր-  
ության ուժերի ոգտագործման վրա, ուժերի, վո-  
րոնք բղխուժ են յերկրի տերրիտորիալի ընույ-  
թից, աշխարհագրական դիրքից, կիմայական,  
հողային և այլ պայմաններից:

Կուլտուրական և մանավանդ պլանային  
տնտեսությունը պահանջում է, վորպեսզի այդ  
ֆակտորներն ուսումնասիրվեն և դիտականորեն,  
նախամտածված ու նպատակահարմար կերպով  
հարմարեցվեն մեր օգտագործության համար։  
Սրանով առաջադրվում է տերրիտորիալի կող-  
մակերպման անհրաժեշտությունը. այս տեղով  
մենք հասկանում ենք՝ տերրիտորիալի գուղա-  
տնտեսական շրջանացումը, նրա տեխնիկական  
կազմակերպումը (զիմավորապես մելի որացիան)  
և տնտեսական կյանքի կազմակերպումն այդ  
տերրիտորիալի վրա. (հողայինարարության, տըն-  
տեսությունների տեղափորման, տարաբնակեց-  
ման և տարածության յուրացման (օсвоение)  
միջոցների):

Երջանցում։ Խորհրդավին Միության տընտեսության միասնականության հետևանքով ամեն մի տնտեսական շրջանին առաջադրվում են իր ընտալատմական պայմաններին համապատասխանող յուրահատուկ խնդիրներ։ Հայտառանում ազդ պայմաններն ընդամենը 30 հազ. քառ. կիլոմ. տարծության վրա չափազանց խայտաբղետ ու բարդ են։ Սակայն մի շարք բնորոշ տվյալների հիման վրա լերկիրը կարող ենք բաժանել հետեւյալ 4 հիմնական շրջանների՝ ա) դաշտավայրավին, բ) նախալեռնային, գ) սարահարթավայրին և դ) լեռնավին։

Դաշտավին շրջանը (որինակ Յերևանի գավառի խոշոր մասը) իր հարթ տեղագրությամբ շուրջ կլիմայով ու հողերի հատկությամբ շատ հարմար ե բարձր տեխնիկական կուլտուրաների ու մասնավորապես բամբակի մշակության համար։ Նախալեռնային շրջանը (նույն Յերևանի գավառի նշանավոր մասը) վերին աստիճանի նպաստավոր պայմաններ ե ներկայացնում արգելվործության (պտղատու ծառերի և խաղողի) և ծըլխախտամշակության համար։ Սարահարթավայրին շրջանի (Սևանի ու Լենինականի գավառների) հարթ մասսին իրենց հողակլիմայական պայմաններով հարմար են հացահատիկ-կարտոֆիլավին տնտեսության դարզացման համար, մասնամբ

խաշնարածական թեքումով։ Վերջապես, լեռնալին շրջանը (Լոռու, Սևանի, Զանգեզուրի և մյուս դավառների լեռնային մասսի վները) հիանալի տվյալներ ունեն ալպյան արդյունավետ անասնապահության համար։

Սրանք շրջանացման սխեմատիկ ու գլխավոր ուղղություններն են, ինարկե, գոլություն ունեն բազմաթիվ անցողակի տերրիտորիալ շերտեր, գյուղատնտեսության խառն կազմակերպությամբ։ Բայց ամեն մի դեպքում անհրաժեշտ ե պարզապես վորոշել նույնիսկ ամեն մի գյուղի գյուղատնտեսական դեմքը, տիպը, նպատակահարմար ուղղությունը և ըստ հնարավորին նեղ մասնագիտացում ստեղծել այդ ուղղությամբ։ Արդեն կատարված նոր շրջանացումն ըստ ամենայնի, հաշվի յե առել այդ պահանջները վոչ միայն գավառի, այլև վարչական շրջանի սահմանները վորոշելիս։ Հնգամյակի ընթացքում մնում ե ճշտել ու խորացնել այդ աշխատանքները, մասնավորապես գյուղատնտեսության շըրջանացման ուղղությամբ։ Այսպիսով գյուղատընտեսությունն ամեն մի վայրում կստանա անհրաժեշտ ազդակն իր զարգացման համար։

Մելիորացիա։ Մշակելի հողային ֆոնդը կազմում ե այն գլխավոր միջոցը, վորից մեծապես կախված է գյուղատնտեսության և մասնավորա-

պես հողագործության արտադրության չափը։  
 Այս տեսակետից Հայաստանն այնքան ել հարուստ չե։ Մեր հողասակավորթյունը զգալիորեն  
 սահմանափակում ե գուղատնտեսության զարգացման շրջանակները։ Ամբողջ հողային տարածությունից (ընդամենը 2,989 հազ. հեկտար,  
 իսկ գլուղական բնակչության մի շնչին ընկնում ե 4,15 հեկտ.), 20,7% -ն անհարմար հողեր են։  
 12,1% -ը անտառ, 43,8% -ը տրոտներ, 3,1%  
 խոտհարքներ և միայն մնացած 20,3% վարելանող, այդի և տնատեղեր են։ Պետք ենկատի ունենալ, վոր արոտների մեծ մասը (գլուղական և  
 ալսպես կոչված «ձմեռային» արոտները – առապարները) նվազ ու սակավ բուսականությամբ հաճախ քարքարոտ, կիսաանապատ տարածություններ են։ Այսպիսով անմիջականորեն մշակվող հողերի տարածությունը, դրա մեջ հաշված նաև խոտհարքները, կազմում ե 702,5 հազար հեկտ., կամ ընդհանուր տարածության 23,4 տոկոս, իսկ գլուղբնակչության մի շնչին հազիվ ընկնում ե մի հեկտար (0,98), վորից միայն կեսն եր զբաղված ցանքերով ու այգիներով։

Գլուղական աճող բնակչությունը հողովքավարելու համար՝ հնգամյա պլանը նախատեսում ե նոր տարածություն ներգրավել մշակելի հողերի շրջանառության մեջ։ Դրա գլխավոր

միջոցներից մեկն՝ անջրդի հողերի վոռոգումն ու  
վարելանող գարձնելն է։ Զբաշխնարարության  
հնգամյա պլանով նոր հողերի վոռոգման աշխատ-  
ասնքներ կատարվում ու կատարվելու յին 61  
հազ. հեկտ. տարածության վրա, վորից այս հըն-  
դամյակում պատրաստ կլինեն ողտադործման  
համար և լուրացվելու յին 46,4 հազար հեկտ +  
Ըստ տեղերի (որինելուների) այդ տարածությու-  
թյունը բաշխվում է հետեւալ կերպ.

Վոռոգվ. եւ վորից յու-  
նոր հող ըսցվելուցեւ

1. Փ. Սարդարաբ. ջլանցք	8,4 հ.հ.	8,4 հ.հ.
2. Ալղբ-լճի ջրհան	4,1 »	4,1 »
3. Ղոերի սիստեմ	34,0 »	25,0 »
4. Արագդայանի դաշտ	10,0 »	4,4 »
5. Զանգիբ. և Սև ջրի չորաց. 20,0 »		-
6. Մանը աշխատանքներ	4,5 »	4,5 »

Ինչպես տեսնում ենք, Ղոերի (առապար-  
ների) ու Արագդայանի հողերի մնացած մասը  
կյուրացվի հետեւալ հնգամյակում և Զանգիբա-  
սարի ու Սև ջրի ճահիճների չորացումը, վորի  
աշխատանքները կսկսվեն այս հնգամյակում,  
նույնպես յուրացվելու յին հետեւալ հնգամյա-  
կում։

Նոր հողերի վոռոգումը կատարվելու յեւ  
իհաշիվ գյուղական ու ձմեռալին արոտների և

անհարժար հողերի։ Բացի դրանից, քարքարոտ-ները մաքրելով, բարելավելով ու մելիորացիալի յենթարկելով, արոտների մի մասը պիտի վերածվի վարելահղերի (38,5 հազ. հեկտ.) ու խոտհարքների (60 հազ. հեկտ.), Այդ բոլոր աշխատանքների հետևանքով պիտանի և ոգտագործելի հողերի տարածությունը հնգամյակի ընթացքում հետեւալ փոփոխությունները կլրէ։

	Տարածությունը		32 թ. %/ 27 թ.
	հազ.	հեկտ.	
	1927 թ.	1932 թ.	
1. Տնատեղեր . . . . .	15,0	17,0	113,1
2. Պաղատաւ և խաղողի այգի .	15,4	20,0	130,0
3. Վարելահղ . . . . .	580,3	658,6	113,3
4. Խոտհարք . . . . .	91,8	151,8	165,4
Հնդամենը	702,5	847,4	120,7
5. Արոտներ . . . . .	1208,7	1204,9	99,1
Բոլորը	2011,2	2052,3	120,4

Սակայն, չնայած մշակելի հողերի ալսպիսի խոշոր ընդարձակմանը (հաշված նաև խոտհարքները), շնչահասույթի նորման մնալու լե նույնը։ Դրա դիմաց նախատեսվում ե բարձրացնել վարելահողի ոգտագործման աստիճանը, տարեց-տարի ներգրավելով ցանքաշրջանառության մեջ վոչ միայն նոր վոռոգվող հողերն,

այլ և հանգստի թողնվող տարածության նշանավոր մտաք

Այդ հնարավոր կդառնա մի կողմից ջրային սխտեմերի ուեկոնստրուկցիալով ու ջրոգտագործման կարգավորումով — բարձրացնելով վոռովզով վարելահողի փաստացի ջրապահովումը — և, մյուս կողմից՝ ցանքսաշրջանառության ու սերմնագույնության ավելի բարձր ու կատարելագործված ձևեր մտցնելով (բազմադաշտյան սխտեած և այլն): Հետեւյալ աղլուսակը ցույց է տալիս վարելահողի ու ցանքսերի տարածության հարաբերությունը:

	Վարելահողի տարած.	Դրանից ցանքսը (%)	Ցանքսաշրջանառության հարաբերող
Ջրովի . . . . .	1927 1932	100,3 142,7	70,8 134,5
Անջրդի . . . . .	1927 1932	480,0 515,9	250,9 318,7
Բնդամենը . . . . .	1927 1932	580,3 658,6	321,7 449,3

Ինչպես աեմնում ենք, առանձին լարվածությամբ նախագծված ե ջրովի ցանքսերի ընդարձակումը, վորով յենթադրվում ե ջրովի վարելահողի ոգտագործումը հասցնել մաքսիմալ

չափերի (94, 50/0): Այդ են պահանջում տեխս-նիկական բարձր մշակույթների, մասնավորապես բամբակագործության զարգացման շահերը:

Հողաշինարարություն: Տերիտորիալի լուրացման անհրաժեշտ նախադրյալներից մեկն ել հողաշինարարությունն ե, վորով մշակողը անմիջականորեն կապվում ե հողի հետ: Ցեթե միջգուղյան հողաշինարարությունը հնարավոր ե տվարտել այս հնգամյակի ընթացքում, ապա գյուղմիջյան հողաշինարարությունը կարելի կլինի կատարել սիայն կիսով չափ: Այդ բարդ խնդրի լիակատար լուծումը օտարված ընթացքում մեր ուժերից վեր ե, քանի վոր նա կապված ե մի շարք նյութական ու տեխնիկական դժվարությունների հետ: Նախ և առաջ գյուղատնտեսության վերակառուցման պահանջից բղխող հողոգտագործուան ավելի նպատակահարմար ձևերն անհրաժեշտ են դարձնում հողաշինարարության ավելի կատարյալ սիստեմի անցնելը (հողացըվածության վերացում և այլն). մյուս կողմից, գյուղերի վերահատակազմումը և բազմաթիվ կոլեկտիվ անտեսությունների կազմակերպումը նոր բարդություններ են մացնում այս գործի մեջ: Դրան պիտի ավելացնել այն, վոր հողաշինարարական աշխատանքներին ալսուհետեւ

արվելու յե պարզութոշ դասակարգային բնութիւն հակառակ սոսկ հողահավասարեցման, վոր տեղի ուներ մինչև այժմ։ Այս ասպարիզում մենք ստիպած ենք համառորեն պայքարելու զլուղի հետադեմ վերնաշերտի մանր սեփականատիրական տրամադրությունների դեմ ու հաղթահարելնրա կատաղի ընդդիմությունը։

Հայաստանի պայմաններում առանձին կարևորություն ունի արոտաշինարարության, արոտավայրերի ռացիոնալ ոգտագործման ու քոչվորական տնտեսությունների գեթ մի մասը նստակյաց դարձնելու հարցը։ Սա ևս համարվում ե հնդամյակի հերթական խնդիրներից մեկը։

Կազմակերպչորեն համեմատաբար հեշտ, բայց նյութական միջոցների տեսակետից ավելի դժվար ե նոր հողերի շինարարությունն ու տընտեսական յուրացումը։ Մրանք առաջին հերթին և մասնակի մասով ոգտագործվելու յեն խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպելու համար և մնացածը հատկացվելու յե գաղթեցման (պերեսելենից) ֆոնդին այն անհատական տնտեսությունների համար, վորոնք հողագուրկ լինելով չեն տեղավորվել կամ բավարարվել հողաշինարարության միջոցին տարաբնակեցման կարգով։

Հնգամյակի ընթացքում տարաբնակեցվելու լե 10,5 հազար տնտեսություն հողասակավ շըրջաններից։ Գաղթեցման ֆանդին հատկացվելու լե 59 հազ. հեկ. տարածություն, վորից 36,2 հ. հ. մելիորացիալից ստացված նոր հողերից, իսկ մնացած 22,8 հազ. հ. հողաշինարարության հետևանքով ազատված հողամասերից։ Այդ տարածության վրա տեղափորվելու յեն 9640 տնտեսություն 48,200 շնչով, վորոնցից 1,360 տնտես. 6,400 շնչով նոր յեկողներ են։

Այսպիսով, բնակչության ուժեղ աճման հետևանքով (տարեկան 3,6—4,0%), այս հնգամյակում հնարավորություն չի լինի հիմնովին լուծել հողասակավության հարցը, բայց վերոհիշյալ ձեռնարկումները վորոշ չափով կմեղմացնեն հողանեղվածությունը, մանավանդ այն շրջաններում, ուր նա հատկապես սուր բնույթ ունի։

### 3. ՀԱՆՐԱՅԻՆԱՑՄԱՆ ՊՐՈՑԵՍՍՆԵՐԸ

Գլուղատնտեսության վերելքի այն տեմպն ու տեխնիկա-տնտեսական վերակառացման խընդիրները, վորոնք նշված են հնգամյա պլանով՝ հնարավոր և իրագործել միմիայն այն դեպքում յեթե ժող. տնտեսության այս ճյուղի սոցիալական կառուցվածքը վերակազմակերպվի հանրայնացման սկզբունքներով։ Հանրայնացման պլա-

ցեսմները գյուղատնտեսութիւն մեջ ընթանալու յեն Յ հիմնական ուղղություններով՝ խորհըրդակին և կոլեկտիվ անտեսությունների ու կոռպերատիվ շինարարութիւնն միջոցով։

Խօսերդային Տնտեսության ներքության մեջ՝ Հնդամյակի սկզբին գոյություն ունեցին 17 խորհ. տնտեսություն, վարոնցից 5 համեմատաբար խոշորները 8 հազ. հեկտար հողերի տարածութիւնը մասնութեցին չողմողկոմատի գյուղարեստի մեջ, իսկ մնացածը գավկործկոմներին, գյուղատեխնիկումներին ու այլ կազմակերպություններին պատկանող մանր տնտեսություններ են։ Հընդամյակի ընթացքում հիմնվելու յեն նոր 9 համեմատաբար խոշոր խորհրդ. տնտեսություններ, յուրաքանչյուրը 2000-ից մինչև 25000 (Ալագյաղ) հեկտար հողամասով։ Դրանք են՝

1. Աղբաբայում — անասնաբուծական ուղղությամբ
2. Ալագյաղում — վոչխարաբուծական ուղղությամբ
3. Բասարգչարում — կարտոֆիլացին հացահատիկ
4. Լենինականում — շաքարի ճակարնդեղ-հացահատիկային
5. Սարգարաբադում — բամբակագործական-ալյեղործական

6. Դարալազագում — վոչխարաբուծական
7. Բազարչայում — անասնտպահական
8. Ցանքիում — » »
9. Ղոերում — բամբակակա-այգեգործական-հացահատիկային

Բացիսը արանցից, հիմնվելու յին նաև մի շարք քաղաքամերձ կաթնամթերային ու պաղա-բան-ջարաբուծական միջակ ֆերմաներ ու տնտեսություններ, վորոնց նպատակն եւ հօմապատասխան մթերքների մատակարարումով բավարարել մերձակա քաղաքների սպառողական պահանջը, մեծապես նպաստելով գյուղատնտեսական մթերքների շուկայի կորդավորման գործին:

Բացի դրանից, գոլություն ունեցող խորհրդավին տնտեսությունները ևս խոշորացվելու յին հոկային տերիտորիայի ընդարձակման միջոցով և ուժեղացվելու յե նրանց արտադրությունը:

Խոշոր խորհրդային տնտեսությունների նպատակներն ավելի լայն են: Արտադրության խոշոր մասշտաբով սրանք կոչված են հումույթ հայթալիթելու վերամշակող արդյունաբերության համապատասխան ճյուղերին և մյուս կողմից ընդլայնելու գյուղատնտեսական արտադրանքի ապրանքային ֆանդի սպառողական մասը:

Տեխնիկապես համեմատաբար կատարյալ առըքավորված այս խորհրդային տնտեսությունները հանդիսանալու լեն վոչ ոխայն վորովես գյուղատնտեսական խոշոր գործարաններ, այլ և կուլտուրական ոջախներ, վորոնք իրենց որինակով մեծապես ներազդելու լեն շրջապատի գյուղացիական անտեսությունների վրա՝ նրանց տեխնիկական ու ոգրո-կուլտուրական վերակառուցման և գեպի սոցիալիստական սեկտորը ներգրավելու խմասառվ:

Կոլլեկտիվացիա: Ավելի մեծ չափով նույն բանը վերաբերում է կոլլեկտիվ տնտեսություններին: Այդ շարժումը մեր աչքի առաջ ծավալվում է անասելի ուժգին թափով: Հատկապես այս բնագավառում ներկա հնգամյակը հանդիսանում է շինարարական առաջին փուլը: Կոլխոզների շինարարության ցուցանիշները հնդամյակում հետևյալ դրությունն են պատկերավորում:

1927/28 թ. 32/33 թ.

Կոլլեկտիվ տնտեսությունների

ների թիվը . . . . .	96	550
Նրանց մեջ մտնող տնտեսությունների թիվը (հաղարով) . . . . .	2,8	27,5
Ցանքսերի տարածությունը (հազ. հեկտ.) . . . . .	5,3	75,1
Հնդհանուր արտադրանքի արժեքը (26/27 թ. գներով), միլիոն ռուբլի . . . . .	0,5	20,7

Յեթե 27/28 թ. կոլտնտեսություններն ընդգրկել եյին զլուղացիական տնտեսությունների, ցանքսերի տարածության և արտադրանքի միայն  $\frac{1}{2}$ — $\frac{1}{2}$  տոկոսն, ապա հնդամյակի վերջում ընդգրկված պետք ե լինին՝ տնտեսությունների  $17,2^0/_{\circ}$ , ցանքսերի  $16,8^0/_{\circ}$ , բուսաբուծության արտադրանքի  $20,5^0/_{\circ}$  և աօքանքոյին մասսայի  $25,4^0/_{\circ}$  ը:

Գլուղատնակեսության սոցիալիստական պետակառուցման գործում թերես ամենից շատ սրբ ընտադավառը պետք ե լր վրա քենոի մեր ուշադրությունը։ Յեթե առաջին փորձերը չեն տալիս սպասած արդյունքերն, այդ դեռ չի նշանակում կոլլեկտիվացման սխառեմի անկենսունակ լինելը։ Ասհատ տնտեսությունը յերբեք չի կարող ունենալ զարգացման ու կատարելագործման այն հնարավորությունները (մեքենայացում, ցանքսաշրջանառություն, բարձր տեխնիկա և այլն), վորոնք ունին կոլլեկտիվ խոշոր տնտեսությունները։ Կասկած չկա, վոր սաղմանավորման ու կազմակերպչական շրջանից յենելով կոլտնտեսություններն ուժեղանում են, կենսունակ են դառնում և հաջողությամբ գրավելու լին իրենց արժանի տեղը։

Խորհրդային Միության մեջ նորանոր միջոցներ են իրականացվում կոլտնտշրժմանն

ընդառաջելու և ավելի դարկ տալու համար։ Այսուեղ արդեն նկատվում է մի նոր նշանակալից յերեսուզթ՝ մասսաբական կոլեկտիվացում ամրող ռայոնով։ Թերևս կարիք լինի մեր հընդամբակի վերանայելու՝ նման ձեզ մեզ մոտ ևս համապատասխան մասշտաբով՝ նախառեսելու համար։

Բացի այդ, խիստ հետաքրքրական ե կոլեկտիվացման մի այլ ձև, վորս խոշոր հաջողություններ եռնեցել Ռւկրանայում և ՌՍՖՌՀ-ում — այդ՝ մերենատրակտորական միջդյուղյականներն ու շարասյուներն են (ԿՈԼՈՆԻԵ), վորոնք չնշելով մանր-մունք հողակտորների սահմանները, կոլեկտիվ հողամշակության հիմք են դնում հազարամյուր ու տասնյակ հազարավոր հեկտարով անընդհատ հողային մասսիվների վրա։ Թեև այս հանգամանքը նախառեսված չեր հնդամբա պլանով, բայց արդեն առեն ինչ նախապատրաստվում է հնդամյակի Զ-րդ տարուց սկսել միջդյուղյան մերենատրակտորային կայանների ու շարասյուների կազմակերպումը։

Այսպիսով ահա գլուղատնտեսության կոլեկտիվացման համար նորանոր միջնորդով ավելի լայն ասպարեզ ե բացվում։

Գյուղատնտեսական կոռպերացիա։ Գյուղատնտեսության գորգացման տվյալ ետապում

հսկալական դեր ունի կատարելու գյուղատնտեսական կոռպերացիան, վորը նախորդ հնդամյակում ձեակերպվելով բավականաշափ ամրացրել ե իր դիրքերը և ներկալում հանդիսանում ե սոցիալ-տնտեսական մի պատկառելի գործուն: Համախմբելով իր շուրջը տամնակ հազարավոր անհատական տնտեսություններ, գյուղկոռպերացիան վոչ միայն նպաստում է նրանց արտադրական գործունեության կազմակերպման ու ազրանքա-շուկայական կապերի ուժեղացմանն, այլև նախապատրաստում է հանրայնացման պլանացնեսաների ծավալումը նրանց մեջ:

Գյուղկոռպերացիայի կազմակերպչական աճումը հնդամյակի ընթացքում արտահայտվում է այսպես՝

27/28 թ. 32/33 թ. 32/33 թ. 0/0%

առ 27/28 թ.

1. Ստորին ցանցի կազմակերպ. թիվը *)	291	1042	358,1
վորից՝ ա) Գյուղ. վարկային ընկ.	41	80	195,1
բ) մասնագիտ-արտա- դրակ.	148	354	239,3
2. Անդամների ընդհանուր թիվը (հաղար.)*)	77,8	228,9	287,8
վորից՝ ա) Գյուղ. վար- կային ընկ.	34,0	80,0	235,3
բ) մասնագիտ-արտա- դրակ.	23,9	75,0	313,8

\*) Սրանց մեջ մտնում են նաև կոլլելտիվ տընտեսություններ:

Մասնագիտական-արտադրական ընկերություններով ընդգրկվելու յեն գյուղատնտեսության բոլոր ճյուղերն անխտիր։ Բացի այդ, ընդհանուր թվից այստեղ առանձնացված չեն կոլխոզները, մելիորատիվ և մեքենապատագործական ընկերությունները։

Յեթե զտենք անդամների կը կնակի հաշվառումը (այսինքն, չհաշվենք, վոր մի տնտեսությունը լերկու-յերեք գյուղ ընկերությունների անդամ կարող ել լինել, որինակ, միաժամանակ վարկային, բամբակագործական և մելիորատիվ, իսկ նման դեպքեր շատ են առեղի ունենում) ապա գյուղտնտեսությունների կոռպերացման տոկոսը 27/28 թ. կլինի մոտ 30%, իսկ 32/33 թ. արդեն մոտ 80%։ Մասնավորապես չքավոր գյուղացիությունը հնդամյակում ամբողջովին պետք ե կոռպերացվի։

Ավելի ուժեղ թափով, քան կազմակերպչական ցանցը՝ աճելու յեն գյուղկոոպերացիայի գործառնություններն ու մասնավորապես ապրանքաշրջանառությունը, վորի ցուցանիշներն ստորև տալիս ենք՝ (միլիոն ռուբլով):

	27/28 թ.	32/33 թ.	32/33 թ. %
առևտ ապրանքաշրջանառություն	11,6	44,5	335,5
վորից ա) վաճառահանում	9,3	38,8	416,5
բ) Մատակարաբում	1,6	5,7	362,1

Այսպիսով, գյուղկոռակերացիան հետզհետեւ ավելի լայն չափով ընդգրկելու յե կոռակերաց ված գյուղացիական անտեսությունների արտադրական — վաճառահանման և հայթայթման գործունեությունը։ Մասնավորապես, գյուղկոռակերացիայի մթերութիւնը 27/28 թ. ընդգրկել են գյուղատնտեսության արտադրած աղբանքային մասսայի  $30^0/_{\text{o}}$ -ը, իսկ 32/33 թ. ընդգրեկումը կլինի  $53^0/_{\text{o}}$ -ից ավելի։

Անհրաժեշտ ե ավելացնել, վոր հնդամյապլանը կազմելուց հետո, այժմ արդեն գյուղկոռակերացիայի ցանցը հիմնվին վերակազմվել ե. պարզեցրած նոր ձևն ավելի մեծ հնարավորություններ պետք ե տա գյուղատնտեսության մասնագիտական ճյուղերը բազմակողմանիորեն սպասարկելու և մասնավանդ արտադրական պրոցեսները լիովին կազմակերպելու համար։

Գյուղատնտեսության ամբողջ հանրախացված սեկտորի (խորհրդ. և կոլլեկտ. անտեսություններ, այլ գյուղ. արտադրական ձեռնարկություններ, անտառաքուծություն, ձկնորսություն և այլն) ամբողջ արտադրանքի արժեքը 27/28 թ. կազմում եր գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի միայն  $2,5^0/_{\text{o}}$ -ն, իսկ հնդամյակի վերջում հասնելու յե  $25^0/_{\text{o}}$  ի։ Մա-

արդեն խոշորագույն հաջողություն պետք ե  
համարել սոցիալիստական ռեկոնստրուկցիալի  
առաջին ժամանակաշրջանի համար:

Դյուզվոպերացիալի, խորհրդավին և կոլ-  
լեկաֆվ տնտեսությունների համակարգություն-  
ները հանդիսանում են այն կարևոր ու հուժկու-  
թակները, վորոնց միջոցով խորհրդավին իշխա-  
նությունը հնարավորություններ և ընձեռում  
պլանավին ու կողմակերպված ձեռվ վճռակա-  
նապես ներազգել զյուղատնտեսության վրա:  
Հարկավոր ե ներազգել արագ վերելքի ու սո-  
ցիալիստական վերակառուցման համար՝ այսպի-  
սի մի ամենատարածված ճյուղի վրա, վարը  
բաղկացած լինելով հարյուր հազարավոր փոշիա-  
ցած մանր-սեփականատիրական տնտեսությունն-  
ներից դժվարությամբ ե լենթարկվում առաջա-  
գիմական վերամշակման: Գյուղատնտեսության  
հանրայնացված հատվածն այն ուղղորդն ու հե-  
նարանն ե, վորի միջոցով միայն հնարավոր  
կլինի իրագործելու հեղաշրջման մեծ աշխա-  
տանքների ծրագիրն այս ասպարիզում:

Հնգամյա պլանում այս դրույթը միանգա-  
մ ոյն բացահայտօրեն շեշտված ու ընդուժված է:

4. ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ, ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄ ՅԵՎ ԱԳՐՈ-  
ԿՈՒԼՏՈՒՐ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Գյուղատնտեսության վերելքն ու ռհկոնստրուկցիան պայմանավորող նախադրյալների մլուս խումբը, ինչպես ասել ենք առաջ, կազմում են այն ձեռնարկումները, վորոնք ապահովում են սրա արտադրության տեխնիկալի ու կուտուրայի մակարդակի բարձրացումը։ Այս նպատակին ուղղված միջոցները կարելի լե բաժանել յերեք կատեգորիայի՝ զյուղատնտեսության մեջենայացման, ինդուստրացման և ազրոկուլտուր աշխատանքների։

Մեմենայիսցում։ Հայաստանի գյուղատնտեսությունը վոչ միայն հետամնաց ե իր արտադրության տեխնիկայի դրությամբ, ոչ լև է չափազանց աղքատ ե արտադրական միջոցներով։ Յեթե համեմատելու լինենք ինվենտարապահովության ցուցանիշներն, ապա կստանանք հետեւյալ պատկերը. — մի հեկտար ցանքսին ընկնող ինվենտարի արժեքը 1927 թ. հավասար եր՝ Հայաստանում 2 ռ. 58 կ., Անդրկովկասում — 2 ռ. 74 կ., ԽՍՀՄ-ում 8 ռ., Հյուս. Ամեր. Միաց. Նահանգներում 33 ռ. 87 կ. և Գերմանիայում 80 ռ. 85 կ.։ Յեթե սրան ավելացնենք և այն, վոր Հայաստանում նույն թվին տնտեսություն-

ների 56 % ինվենտարազուրկ եյին, ապա պարզ կլինի, թե ինչ խոշոր բաց ունի գյուղատնտեսության այս կողմը և ինչպիսի անելիքներ ունինք ապագայում։ Մեր մի շարք շրջաններում դեռ տիրում ենահագետական արորի և պըիմիտիվ ու անբավարար ինվենտարի գործածությունը։

Այս պայմաններում ինվենտարի զացիայի և հատկապես մեքենամատակարարման գործը կարեոր տեղ ե գրավում հնդամլա պլանի մեջ։ Հնդամյակի ընթացքում մատակարարվելիք զյուղմեքենաների ու գործիքների արժեքը հավասար ե մոտ 5 միլ. ռուբլու, այնինչ 27—28 թ. համապատասխան գումարը կազմել ե միայն 397 հազ. ռուբլի։ Սըա հետևանքով հնդամլապի վերջում մի հեկտար ցանքսին ընկնող ինվենտարի արժեքը բարձրանալու լե մինչև 7 ռ. 72 կոպ., այսինքն յեռապատկվելու յե։

Բատ գլխավոր մեքենաների հնդամյա պլանը տալիս ե մեքենամատակարարման հետեւալ թվերը։

Կար հնդամյակի	Ներածվելու յե
սկզբին	հնդամյակի ըն-
	թացքում

քանակը	հատուլ	արժեքը
		հազ. ռ.

1. Տրակտորներ	214	526	946,8
2. Գութաններ	18,000	18,500	740,0
3. Շարքացան մեքենաներ	260	2,200	180,0
4. Հնձող	200	1,700	68,0
5. Կալսող	տեղ չկա	200	600,0
6. Քամինար ու սերմազառ դ	2,905	4,150	357,0

Համապատասխան քանակությամբ ներածվելու յին նաև այլ գործիքներ, առաջարատներ, մանր ինվենտար, պահեստի մասեր և այլն: Ինչպես տեսնում ենք, ըստ պլանի միքանի անգամ ավելի ինվենտար ե ներածվելու այժմ դոյցություն ունեցող քանակից:

Պիտի ասել, վոր մեքենատրակտորական կարաններ կազմակերպելու առթիվ մեքենացման պլանն այժմ վիրացվում ե ել ավելի բարձրացնելու և ներածման մասշտաբն ընդլարնելու ուղղությամբ: Որինակ, ներածվող տրակտորների թիվը հասցված ե 700-ի, ճնգամակի ընթացքում արորը փոխարինվելու յե գութանով և այլն: իսկ մեքենամատակարարման համար պահանջվելիք գումարը 5 միլիոնից բարձրացված ե մինչև 7 միլ. ոռորդու:

Մեքենարացման պլանի նպատակադրույթներն են՝

ա) արորի հերկից ամբողջովին անցնել գութանի հերկի, բ) ճնգամյակի վերջին հասնել մեքենայական լրիվ սերմազման, գ) բամբակացմանքը  $100^0/0$ -ով, իսկ հացահատիկներինը մինչև  $50^0/0$ -ով կատարել շարքացանով և դ) լիովին բավարաբել հանրայնացած սեկտորի մեքենաների ու գործիքների պահանջը:

Դյուղատնտեսաւթյան տեխնիկական վերա-

զինավորումը, վոր ալսքան միջոցներ ե պահանջում մեզանից, ամենակարծ ժամանակամիջոցում տնտեսապես կարող ե իրեն արդարացնել. բավական ե հիշատակել, վոր սերմազը-տումից ու շարքացանից ստացած սերմացվի տնտեսումն ու բարձրացումը հենց առաջին տարիների ընթացքում կարող են ծածկել այդ մեջենաների արժեքը:

Ենդուստրացում: Գյուղատնտեսության ինդուստրացման միջոցով՝ նրա շուկայական ճյուղերի քաջալերման, ապրանքայնության բարձրացման և գյուղ-մթերքների նախնական վերամշակության արդյունաբերությունը զարգացնելու խնդիրներին հնգամյա պլանը հասկացնում ե առանձնահատուկ տեղ:

Այս ասպարիզում ձեռնարկումներն ուղղըված են բացառապես գյուղ՝ կոռպերացիայի և խորհրդ՝ տնտեսությունների հունով. վորով նրա հայթալիթման-մատակարարման գործունեյությունը փոխանցվելու յե գերազանցապես արտադրական կոռպերացման:

Ինդուստրացման յենթակա զլատավոր ճյուղերն են այգեգործություն գինեգործությունն ու կաթնատնտեսությունը: Այսպես, կառուցվելու յեն մի շարք գինու մառաններ իրենց սարքավորումով ճակատում հաղ. հեկտոլիտր (մոտ կես միլիոն վետ-

ըո) տարողությամբ, նույն ծավալով գինեզոք-  
ծարաններ, 12 ողեզործարան 1,2 միլ. աստի-  
ճանի տարեկան արտադրողականությամբ:

Զնայած, վոր ալժմ գոյություն ունեցող  
13—14 կաթնամթերքների գործարանները (պան-  
րա-յուղագործարանները) լրիվ բեռնվածք չու-  
նեն, այնուամենախիվ կաթնատնտեսական վար-  
երից շատերը գեռ զուրկ են իրենց մթերքը  
վերամշակելու հնարավորությունից: Այդ պատ-  
ճառով հնգամլա պլանը նախատեսում ե զանա-  
զան շրջաններում կառուցել նոր 34 պանրա-  
յուղագործարաններ՝ տարեկան 32,3 հազ. տոնն  
կաթ վերամշակելու ունակությամբ, ինչպես նաև  
9 հատ կաթնամթերքների պահեստներ:

Մյուս ձեռնարկություններից թվենք կա-  
րելորները:—Ծխախոտի ֆերմենտացիոն 3 պա-  
հեստներ, 14 չորանոց, 3 պահեստ ու 2 կոնսերվի  
գործարան պտղատու-բանջարանոցավն մթերք-  
ների համար, 1 կարտոֆիլա-ուլային գործարան,  
ապուխտի, յերշիկի և մսի կոնսերվի 4 գործա-  
րաններ, ձվի ու թոչունների 4 պահեստներ,  
գրենաժի 2 գործարան և բոժոժի համար 7 չո-  
րանոցներ, փեթակներ ու մոմաթերթ պատրաս-  
տելու 7 արհեստանոցներ, ձիթնան, աղորիքներ  
և այլն:

Ինդուստրացման գծով կատարվող դրամա-

կան ներդրութիւններն արտահայտվում են հետևալ գումարներով՝ (հազար ռուբ.)

Բուսաբուծություն	3850
Վորից գինեղործության	2980
Կենդանաբուծություն	5672
Վորից պանրաշուղագործ.	4355
<hr/>	
Ընդամենը	9522

Գյուղաանտեսության հումուլթը, վորը չի գնում խոշոր արդյունաբերության մեջ (որինակ՝ գնում ե բամբակը, կաշին, խաղողի մեծ մասը), վերամշակելով այս ձեռնարկություններում բարձրանալու յե գյուղատնտեսության արտադրանքի արժեքը, միաժամանակ աշխատանքի ասպարեզ բանալով գյուղական վայրերի գործազուրկների համար։ Նկատի պիտի ունենալ նաև այն հանգամանքը, վոր մի շարք մթերքներ առանց վնյամշակվելու տեղում, հնարավոր կամ ձեռնտու չեր լինի տեղափոխել ու վաճառել հեռու շուկաներում. (որինակ՝ կարտոֆիլը, միրգը, բանջարեղենը)։

Ինդուստրացման հետ սերտորեն կապված ե գյուղի ելեկտրիֆիկացիայի հարցը։ Զնայած մեր լայն հնարավորություններին եժան ելեկտրոեներգիա ունենալու տեսակետից, դժբաղդաբար, մենք գրեթե վոչինչ չենք արել ելեկտրականությունը գյուղատնտեսության մեջ գոր-

ծածելի դարձնելու ուղղությամբ, յեթե իհարկե չհաշվենք Այդը-լճի ելեկտրա-ջրհանը:

Այս իմաստով հնգամյակում վճռական քայլեր են արվելու առաջին հերթին գյուղ. ինդուստրիան ելեկտրիֆիկացիայի լննթորկելու և զաւգընթացաբար ելեկտրոներգիան մուծելու նաև գյուղատնտեսական աշխատանքների մեջ (կալսող, սերմազտիչ, քամահար, ջրահան և այլ մեքենաներ բանեցնելու) և կենցաղային կարիքների համար (որինակ՝ լուսավորություն): Ելեկտրիֆիկացիայի լննթարկվելու յեն զոյսություն ունեցող կայանների, կառուցվելիք ելեկտրահաղորդ գծերի, ինչպես նաև նոր կառուցվելիք խոռոր ու գյուղական ելեկտրոկայարանների շրջակա գյուղերը:

Գյուղական նոր ելեկտրոկայարաններ կառուցվելու յեն Ախայյում, Յելենովկայում, Մեղրիում, Քեշիշքենդում, Բարանայում, Կարսիք գյուղում, իսկ յեղածները լայնացվելու յեն: Այս աշխատանքների համար նախատեսված ե 1,2 միլ. ռուբլի:

Ապագայում ելեկտրականությունը մեծ ասպարեզ պետք ե գրավի մեր գյուղասնտեսության մեջ:

Ազրոկուլտուր աշխատանքներ: Հնգամյա պըանով նախագծված նյութական ու տեխնիկա-

կան խոշոր արդյունքներին համնելու համար ինքն-ըստինքյան հասկացվում ե, վոր կուլտուրական մեծ հեղաշրջում պետք ե կատարել գյուղատրն-ակառության մեջ. իսկ այդ հնարավոր ե համար-ձակ մասշտաբով ոգրո-կուլտուր աշխատանքների ծավալումով:

Բերքատվությունը բարձրացնելու խնդրում, վորը հնգամյակի առաջնակարգ նպատակներից մեկն ե հանդիսանում, ազրոտեխնիկական մի-ջցոցների շարքում կարևոր տեղ ե գրավում պա-րարտացումը: Հողի ռացիոնալ մշակության, սեր-մաափոխության և մեքենայացման հետ բնական (որինակ՝ գոմաղը), հանգային և քիմիական պա-րարտանլութերի գործածությունը մեծապես պետք ե նպաստի վերոհիշյալ նպատակին հաս-նելու համար: Պարարտացման համար գործած-վելու յեն-գոմաղը, քուսպ, ծծմբաթթու ամմո-նիյ, սուպերֆոսֆատ և կալիի աղ. վերջինների արտադրությունն արդեն կազմտկերպվում ե ար-դյունաբերության գծով:

Հստ հնգամյա պլանի պետք ե պարարտաց-վեն անհրաժեշտագար բամբակի բոլոր ցանքները, իսկ մյուս մշակութները՝ 10—20 տոկոսով մի-այն:

Նույնպես կարևոր ե վորակավոր սերմացվի գործադրությունը, սակայն ակեղեցիոն (սերմա-

բուծական) գործը մեզանում դեռ բավականաշափ զարդացած չե և հնգամյակի վերջում հնարավոր կլինի բարձր վորակի տեսակավոր սերմացվով լիովին ապահովել միայն բամբակագործությունն, իսկ մնացած կուլտուրաները (հացացաբուլսերը, ցանովի խոտ և ալյն) 15—30% ի սահմաններում. միաժամանակ կուժեղացվի տեսակավոր սերմաբուծությունը սելեկցիոն կայաններում և հատուկ դաշտերում:

Գյուղատնտեսության վերակառուցման գաղափարի իրագործումը և մասսայականացումը պահեցում ե տեխնիկատնտեսական գիտելիքների հսկայական բազա, վորը հիմնած լինի փորձնական ու ցուցադրական լայն աշխատանքների վրա. Դրանց անհրաժեշտությունը մանավանդ բղխում և մեր լերկրի բնական պայմանների բազմազանությունից և տակավին համեմատաբար սահմանափակվելով ծանոթությունից, վորը մենք ունենք այդ պայմանների ու միջոցների դորժնական կիրառման և ոգտագործման վերաբերյալ:

Ուստի, հնգամյա ոլլանով նախատեսում և մեր գիտական, փորձնական ու ցուցադրական հիմնարկությունների ցանցի ուժեղացումը և բընակչության ագրոտեխնիկական մասսայական սպասարկության ծավալում: Այդ հիմնարկությունների թվին են պատկանում բամբակագոր-

ծական, հացահատիկային, պտղաբուծական, գինեգործական փորձնական կալաններն ու ցուցադրական դաշտերը, սերմնաբուծական կոնտրոլ, միջառաբանական, շերամապահական, զուտեխնիկական, ալպիական, լեռնամարդագետնային, ովերնելլթաբանական կայանները, մեքենափորձական բյուրոն, գյուղատնտեսական թանգարանը, բուսաբանական այգին և այլն:

Ինարկե, ագրոկուլտուրական հիմնարկությունների այս հոլակապ ցանցը հուսվելու լեզվոչ միայն գյուղատնտեսական պետական ուժանների շուրջը և խորհրդավին տնտեսությունների մեջ, այս կողեւկոտիվ տնտեսությունների ու գյուղկոռագերացիայի սիստեմում:

Սրան զուգընթաց ուժեղացվելու լեզվության գործը: Մասնավորապես ագրոկայանների ցանցը, վորը հանդիսանում է գյուղատնտեսության գիտության և տեխնիկայի հաղորդիչը մասսաների մեջ, վերակաղմակերպվելու և լայնացվելու լեզվության հաշվով, վոր՝ հնգամյակի վերջում ամեն մի շրջան ունենալու ագրոկայան՝ համապատասխան մասնագիտության գյուղատնտեսներով սարքավորումով, ինվենտարով ու հողամասով: Համապատասխան կերպով զարգանալու լեզվության կոռագերացիայի ագրոնոմիան, Արտիկին ապահովելով իր ցանցի, մասնավորապես

կոլտնտեսությունների ազգոնոմիական սպասարկումը:

Բնական ե, վոր կազմակերպիչ կենդանի ուժերի՝ գյուղատնտեսական մասնագիտական կադրերի հարցն այստեղ մեր տուած ծառանում ե իր ամբողջ մեծությամբ:

Այսպես, ազրովերսոնալի թվական աճման պահանջն ըստ հնգամյակի պատկերանում ե հետեւյալ կերպ.

	27—28 թ.	32—33 թ. պիտի
	կալին	լինեն
Բարձր վորակի	159 հոգի	586 հոգի
Միջին վորակի	45 »	747 »
Ընդամենը	204 »	1333 »

Ուրեմն, գյուղատնտեսության վերելքի ու ուեկոնստրուկցիալի նշված տեմպն ապահովելու համար հնգամյա պլանի մասնագիտական նոր անձնակազմի ավելի քան 1,000 հոգու պահանջ ե դնում: Ահա ինչու մասնագիտական բարձրագույն ու մանավանդ միջնակարգ (գյուղտեխնիկումներ) դպրոցների ցանցը և նրանց արտադրությունը ես պետք ե ուժեղացվի շտապողական ու մաքսիմալ թափով:

Խոշոր անելիքներ ունի նաև գյուղյերի ապրոցների սիստեմը՝ կրասեր և շաբաթյան վորակալ կազմ պատրաստելու ուղղությամբ, վորոնց պահանջն ավելի մեծ ե:

## 5. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ

Հնդամյտ պլանով նախատեսված բոլոր ձեռնարկումներն ուղղված են ազգակելու գյուղատնտեսական արտադրության ելեմենտների զարգացումն ու աճումը՝ ցանքսերի տարածության ընդարձակումը, անասունների քանակի աճումը, բերքատվության և արդյունավետության բարձրացումը, գյուղատնտեսության ինտենսիվիկացիան, արտադրության ծավալումն ու նրա ապրանքայինացումը:

Ցանկութիւնը տարածությունն ու անտառների բանակը հանդիսանում են գյուղատնտեսության արտադրության հիմնական ելեմենտները։ Մելիորացիայի պլանն ուսումնասիրելիս մենք մասամբ տեսանք, թէ ինչ միջոցների վրա յեն հենվում ցանքսերի ընդարձակման հնարքավորությունները։ այդ ընդարձակումը, վոր արտահայտվելու յե 126,5 հազ. հեկտ. սահմաններում, գոյանալու յե՝ մելիորացիայից 61,8 հազ. հեկտ., ցանքսաշրջանառության մեջ հանգստի հողերից ներգրավելուց 38,1 հազ. հեկտ., գյուղական արոտները հերկելուց 18,8 հազ. հեկտ. և անտառալին բացումներից 4,9 հազ. հեկտար։

Հատ կուլտուրաների՝ ցանքսերը հետևելակերպ են բաշխվում՝

(Հազար հեկտարով)	27 թ.	32 թ.	32 թ. % առ 27 թ.
1. Հացաբաւյսեր . . . . .	287,4	336,3	117,0
2. Տեխնիկակ-հումքային կուլտուր.	17,0	64,8	322,4
Վորից՝ բամբակ . . . . .	12,2	35,9	294,3
3. Այլ մշակույթներ . . . . .	17,8	57,1	330,1
Վորից՝ կարտոֆիլ . . . . .	8,7	19,7	226,4
<b>Ընդամենը . . .</b>	<b>321,7</b>	<b>448,2</b>	<b>139,3</b>

Այն հանգամանքը, վոր հնդամյակի, սկզբում ցանքսերը բռնում եյին վարելահողի  $55^0/0$ -ն, իսկ վերջում  $68^0/0$ , արդեն պարզ կերպով ասում ե, վոր մեր ցանքսաշրջանառությունը պետք է ինտենսիվանա. մեր հողասակավ պայմաններում սա առավել ևս անհրաժեշտ է:

Մյուս կողմից նկատում ենք, վոր ընդարձակման առանձնապես ուժեղ թափ պետք է ունենան տեխնիկական-հումքային (բամբակ, ծխախոտ, ձիթաբուլսեր, շաքարի ճանդեղի նոր կուլտուրան) և «այլ» կուլտուրաների (կարտոֆիլ, բոստան-բանջարանոց, ցանովի խոտ, կերի ճակնդեղի նոր կուլտուրան) ցանքսերը, վորոնք աշխատապահանջ ու յեկամտաբեր լինելով, նույնպես ինտենսիվ են դարձնում հողագործությունը:

Ցանքսերի հարաբերական տեղաշարժման  
(ըստ տեսակարար կշռի) ցուցանիշները հետեւ-  
վլայներն են —  ${}^{\circ}/_0$  -ով առ գումար. —

*1927թ.*      *1932թ.*

Հացաբույսեր	89,3	75,0
Տեխնիկական-հումք.	5,3	12,2
Այլ կուլտուրաներ	5,4	12,8
<hr/>		
Ընդամենը	100,0	100,0

Ուրեմն, չկասեցնելով հացահատիկացանքսի  
բացարձակ աճումը, հնգամյակը առաջնություն  
և տալիս հումքալին ու բարձր լեկամտաբեր կուլ-  
տուրաների ընդարձակմանը և կերի բաղալի ու-  
ժեղացմանը, հատկացնելով վերջիններիս ցանք-  
սերի ընդհանուր հավելման մոտ  $60^{\circ}/_0$ -ը:

Դրանով հողագործության ինտենսիվ հատ-  
վածն ընդարձակվելու յե  $180^{\circ}/_0$ -ով, մինչդեռ  
եքստենսիվ հատվածը միայն  $17^{\circ}/_0$ -ով:

Նկատի ունենալով կերի միջոցների քանա-  
կը, արոտների ոգտագործման հնարավորություն-  
ները, հնգամյա պլանը նախատեսում ե անա-  
սունների հոտի հնարավոր այսպիսի աճում՝

(Հազար դրամ)	1927 թ.	1932 թ.	32 լ. % առ 27 թ.
1. Զինվորական բանակ	31,5	41,9	133,0
2. Խոշոր յեղջյուրավ. անասուն.	846,1	1.070,5	126,5
3. Մանր	1.806,6	1.923,8	119,7
4. Խոչ և ը	24,2	35,8	147,9
5. Այլ անասուններ	28,9	26,9	112,9
Ընդամենը (վերածած հասուն խոշոր յեղջ. անասունների)	779,8	995,0	127,6

Բացի ձիերից, վորոնց քանակը բավականին պակաս եւ նախապատերազմիանից և հատուկ նըշանակություն ունենալով՝ անհրաժեշտ եր համեմատաբար ուժեղ աճում նախատեսել, մյոււս անասունների նկատմամբ հնդամյա պլանը լինթադրում եւ գերազանցապես արդյունավետ՝ կաթնատու և մսացու անասունների թվի աճում։ Բանող անասունների կարիքը նշանափոր չափով լրացվելու լի մեքենայացումով՝ տրակտորներով։

Բերքատվությունը յեվ անասունների արդյունավետությունը, Արտադրողականության խընդիրը գյուղատնտեսության մեջ պակաս կարևոր չեն, քան արդյունաբերության մեջ։ Ցեղեր արտադրության ծավալման խնդրում մենք հանդիպում ենք խոշոր դժվարությունների՝ նոր հո-

ղալին ֆոնդեր մշակելի դարձնելու ջրաշինարարության, կերի բազան լայնացնելու, անասունների քանակն ավելացնելու և դրանց հետ կապված զգալի կապիտալաներդրութիւնի անհրաժեշտության ուղղությամբ, ապա նույն նպատակին հասնելու, մյուս կարգի ավելի մատչելի ու լայն հնարավորություններն ըստ հարկի ասենեին դեռ չեն ոգտագործված։ Դրանք են բերքատվության և արդյունավետության բարձրացման միջոցները։

Մեր գյուղատնտեսության լեկամտաբերության մակարդակը զեր շատ ցածը ե թե՛ առաջավոր յերկրների և թե՛ մեզնում լեղած հնարավորությունների համեմատությունը 2—5 անգամ։ Ասել ե, բերքավության յեկ արդյունավետության բարձր այդ աստիճանին հասնելով, միևնույն հողի տարածության ու անասունների քանակից, կարելի յեր այժմանից կրկնապատիկից մինչև հնգապատիկ չափով ավելի արտադրանք ունենալ։

Ահա ինչու հնգամյակում կենարոնացվելու լեռշաղրությունն այս կարգի խնդիրների ու ձեռնարկութիւնների վրա։ Միջին բերքատվության բարձրացումը հնգամյակի վերջին նախատեսվում ե հետևյալ տոկոսներով՝ հացահատիկը 28, (աշնան ցորեն 30, գարնան ցորեն 31, գարնան գարի 30), բամբակը 38, կտավատը 15,

կարտոֆիլը, բանջարանոց-քոստանները, յոնջան  
20-ական, պտղատու ալգիները 53 և խաղողի  
ալգիները 70 տոկոսով:

Այս նախագծման իրագործումը հնարավոր  
է հետեւյալ միջոցների կիրառումով՝ մշակության  
տեխնիկայի կատարելացործում, սերմի զտում ու  
տեսակավորում, պարաբարտացում, շարքացան, աշ-  
նան հերկ, ցանքսաշրջանառության կանոնավո-  
րում, ջրելու ռացիոնալացում, պայքար մնասա-  
տուների դեմք կասկած չկա, վոր բերքատվու-  
թյան հնարավորություններն անսպառ են, սա-  
կայն այս հնգամյակի նախատեսումներն զգուշ  
են, քանի վոր նշված միջոցները մեր պայման-  
ներում հարկ լեղածի չափ են ուսումնասիրված  
ու փորձված, ուստի անկարելի յե դրական ճշշ-  
տությամբ հաշվի առնել նրանցից սպասվող ար-  
դյունքները։ Ուրեմն, ներկա հնգամյակն այս  
ասղարիզում ըստ ելության հանդիսանալու յե  
մի փորձաշրջան, վորից հետո ստացված ար-  
դյունքներն ու կուտակված փորձը լայն կիրա-  
ռություն պիտի ունենան մեր հետագա աշխա-  
տանքների ընթացքում։

Նույնը կարելի յե ասել նաև անասնապա-  
հության արդյունավետության մասին։ Նշանա-  
վոր մասում սպառողական ընուզթ կրելով, ա-  
նասնապահությունը դեռ հեռու յե տնտեսու-

թյունը վարելու այն կուլտուրական ձևերից,  
զորոնց գործադրումը նույնիսկ լեղած միջոցների  
առկայությամբ կարող եր բազմապատկել  
այս ճյուղից ստացված յեկամուտը։ Ահա այս  
ձևերի մասսայականացման վրա հենվելով, հըն-  
գամյա պլանով յենթադրվում ե բարձրացնել  
անասնապահության արդյունավետությունն ըստ  
հետեւալ ցուցանիշների (միջին հաշվով)<sup>1</sup> մսաց-  
վի քաշը—15 տոկոս, կթի նորման—30 տոկոս,  
բրդի ստացման նորման—20 տոկոս։

Գլխավոր միջոցներն են՝ անասունների ցե-  
ղի ազնվացումը, անասնապահության սպեցիա-  
լիզացիան—մսացու, կաթնատու, բրդատու թե-  
քումները, (վորով հնարավոր կինի տվյալ թեք-  
ման արդյունավետությունը զարգացնել մաքսի-  
մալ չափով), անասունների ռացիոնալ խնամելը,  
պահելն ու կերակրելը։

Առանձին ուշադրություն պետք ե դարձնել  
վերջին հանդամանքի վրա։ Հայաստանում, չնա-  
յած կերի ռեսսուրսների զգալի բացարձակ ա-  
ճումը, հնգամյակի վերջում, մի գլուխ խոշոր  
անասունի համար վերածած կերի ուլայական  
միավորների քանակն ավելանալու յե միայն  
6—7 կամ առավել 10 տոկոս։ սակայն փորձերը  
ցուց են տալիս, վոր մննդի միևնույն քանակով,  
բայց կերի ռեսսակների հաջող ու ռացիոնալ բն-

արությամբ կտիճնատվությունն ու մսագոյացումը կարող ե նույնիսկ կրկնապատկվել. հաբկավոր և միայն ավելացնել կերի հյութալի և խառացրած աեսակների մասն իհաշիկ ծավալալին տեսակների մասին նոկ ցանովի խոտի, հատիկացին ֆուրաժի, քուսպի և կերի արմատապալարապտուղների բազալի ընդարձակումն այդ հնարավորությունը պետք ե տա մեզ:

Նմանապես բարձրացվելու յե նաև կենդանաբուծության յերկրորդական ճյուղերի՝ թըռչնապահության՝ մեղվաբուծության և շերամապահության արդյունավետությունը համապատասխան ձեռնարկումներով:

Բերքատվության ու արդյունավետության բարձրացման համար վերը թվածքով ձեռնարկությունների բնույթից յերկում ե, վոր նրանք պահանջում են վոչ այնքան նույթական միջոցներ, վորքան խորացրած ու ծավալուն փորձացուցադրական աշխատանք և ագրոկուլտուր պրոպագանդա, վորոնք մասսարականապես ու կաղմակերպվածորեն տարվելով ի վիճակի պիտի լինեն հեղաշընելու մեր գյուղատնտեսության տեխնիկան ու կուլտուրան:

Արտադրաներ: Գյուղատնտեսության արտադրանքի աճումն արդեն արտացոլում է ամբողջ հնգամյա պլանով նախատեսված տեխնիկա-արդ-

աւեսական շինարարության արդյունարար հետևանքները:

Ցանքսերի տարածության ընդարձակման ու վերադասավորման և բերքատվության բարձրացման հետեւանքով բուսաբուծության (հողագործության ընդհանուր արտադրանքի արժեքը հետևյալ թվերով և արտահայտվում (26—27թ. անվտանգության գներով ըստ արտադրողի, միջինն ոռոք լիներով):

	1927թ.	1932թ.	32թ. % առ 27թ.	
1. Հացաբույսեր	(26,2)	27,3	41,8 (159,8)	153,1
2. Տեխնիկակ. մշակույթ.	(4,1)	3,6	15,4 (376,7)	430,3
3. Այլ դաշտ. մշակույթ:	(6,2)	5,3	17,5 (280,7)	829,3
4. Խոտ (քնական ու ցանովի)	(6,8)	5,9	10,7 (170,7)	180,4
5. Այլեզրծութ. (պաղա- տու և խաղողի)	(9,8)	8,1	15,7 (159,5)	194,4
Ընդամենը	(52,6)	50,2	101,1 (191,9)	201,4

ԾԱՆՈԹՈՒԹՅ. Փակագծերի մեջ առնված թվերը վերաբերում են փաստացի բերքին, իսկ մյուսներն՝ արտադրանքին ըստ միջին բերքի պայմանների:

Ի՞նչ են ասում այս թվերը:

Նախ, վոր վերը թված մի շարք միջոցների շնորհիվ հաջողվելու յե հնգամյակի վերջում հողագործության ընդհանուր արտադրանքը կը կնապատկել։ Դրա հետ միասին առանձապես զարկ ե տրվում հումութիւն բազալի ուժեղացմանը քառապատիկ չափով, վորը մեր անելիքների առանցքային նպատակն ե կազմում։ Սրանով ապահովվում ե արդյունաբերության կողմից հողագործության առաջադրած պահանջը. բամբակի արտադրանքի մաքսիմալ ծավալումը, շաքարի ճակընդեղի մշակության զարգացումը, խաղողագործության լիովին վերականգնումը և այլ մթերքների ընդգրկումը արդյունաբերական վերամշակությամբ (կարտոֆիլ, պտուղներ և ալյն), այնպես են աղղակելու հողագործության ալս հատվածը, վոր նա բարձրացնելու յե իր տեսակարար կշիռը 29 տոկոսից մինչև 39 տոկ. իսկ մասնավորապես տեխնիկական մշակույթների խմբակը 7,2 տոկոսից մինչև 15,2 տոկ.։

Ընդլայնվում ե կերի բազան՝ ցանովի խոտով ու արմատապտղարապտուղներով և արագ տեմպով մեծանում ե միուս ինտենսիվ կուլտուրաների արտադրանքի չափը (բուսան, բանջարեղեն)։

Զնայած, վոր ալս բոլորը կատարվում ե

իհաշիվ հացահատիկի արտադրանքի տեսակարար կշռի անկման (54, 4 տոկոս, իջնում և 41, 3 տոկոսի), այնուամենայնիվ սա ևս բացարձակորեն ավելանալու յե կիսով չափ, վորով ներմուծելիք հացի պահանջը վորոշ չափով կպակասի, այսինքն, նվազելու յե հացաֆուրաժային հաշվեկշռի դեֆիցիտը:

Խիստ հետաքրքրական են նկատել, վոր յեթե դաշտամշակության ամբողջ արտադրանքը բաժանենք վարելահողի վրա, ապա մի հեկտարին 27 թ. կստանանք 64 ռ., յեկամուտ, իսկ 32 թ.՝ 120 ռ., այսինքն համեմատական յեկամտաբերությունն աճելու յե շուրջ 87 տոկոսով:

Սա հետևանք ե մի կողմից՝ բերքատվության բարձրացման, մյուս կողմից՝ յեկամտաբեր մշակութների ցանքսի ավելի ուժեղ ընդարձակման և յերբորդ կողմից՝ վարելահողի ավելի ինտենսիվ ոգտագործման: Սրանք դաշտամշակության ինտենսիվացման ամենացայտուն ցուցանիշներն են:

Ահա այն գլխավոր ու դրական տեղաշարժումները, վորոնք կատարվելու յեն հողագործական տնտեսության ու նրա արտադրանքի կազմվածքի մեջ:

Ալժմ դիտենք կենդանաբուծության արտադրանքի արժեքը:

	1927թ.	1932թ.	ՏՏ թ. 0/0/ առ 27 թ.
	Հեղամենը	28,7	53,6
1. Անասնապահություն	24,5	44,2	180,4
2. Թռչնապահություն	8,5	7,4	208,7
3. Մեղվաբուծություն	0,5	1,4	306,4
4. Շերամապահություն	0,2	0,6	299,4
			186,9

Ինչպես տեսնում ենք, կենդանաբուծության հիմնական ճյուղն անասնապահությունն է, վորեց ստացված արտադրանքի արժեքը կազմում է ընդհանուրի  $\frac{4}{5}$ -ից ավելին (27 թ. 85,4 տոկ., իսկ 32 թ. 82,5 տոկոս): Իր տեղում մենք արդեն ասել ենք, թե ինչ ուղղությամբ և զարգանալու անասնապահական տնտեսությունը հայաստանում: Ավելորդ չի լինի մի անգամ ևս շեշտել, վոր մեր անասնապահությունն ունի փայլուն հեռանկարներ, լեթե միայն կոլեկտիվացման ու կոռպերացման միջոցով նա վճռականապես անցնի ինդուստրացման ռելիերի վրա, համախմբվելով արտադրական միավորների շուրջը (պանրա-լուղագործական արտելներ, գործարաններ և այլն): Նույնիսկ Արևմտյան Յեվրոպայում (Դանիա, Շվեյցարիա), մանր-կապիտալիստական պայմաններում զարգացող անասնապահությունը կոնտրոլ միությունների հաջող գործու-

ներության փորձով մի շարք փայլուն ապացուց-  
ներ եւ տալիս մեղ այս իմաստով:

Զարմանալի չեւ ուրեմն, վորայսպիսի դրու-  
թով հնգամյա պլանը նախադժում եւ խոշոր հա-  
սուն անասունի վերածած մի դիմի միջին լեկա-  
մտարերությունը 31,4 ոռուբլուց բարձրացնել  
44,5 ոռուբլու, այսինքն 41,6 տոկոսով:

Վոչ պակաս ուշադրության արժանի լեն  
նաև կենդանաբուծության այսպես կոչված «Եկեր-  
կրորդական» ճյուղերը՝ թաջնապահությունը, մեղ-  
վաբուծությունը և զերամապահությունը։ Հողա-  
սակավության պայմաններում այս «Ճնճե» գյու-  
ղամնաեսության քաջալերումն զգալի չափով  
կարող եւ լրացնել ճյուղացու տնտեսության ադ-  
քատիկ բյուջեյի լեկամտալին մասը, մանավանդ  
վոր նրանց զարգացման պայմանները ևս խիստ  
նպաստավոր են։ Թե բնական տվյալների և թե  
հումույթի և շուկայական սթերքների պահանջի  
տեսակետից։ Ռւսակի, հնգամյակը նախատեսում  
եւ այլ ճյուղերի վորակազին բարձրացում և ար-  
տադրանքի կրկնապատիկ ու լեռապատիկ ա-  
ճում:

Այսովով, կենդանաբուծության ու հողագոր-  
ծության համապատասխան ճյուղերի զարգաց-  
մամբ արագորեն աճելու լեւ վոչ միայն մեր հու-  
մույթավին, այլ նաև սննդամթերային ֆոնդը։

Միքանի խոսք անտառային տնտեսության մասին։ Հայաստանը համարվում է անտառագուրկ լերկիր (ընդամենը կա 362 հազար հեկտ. կամ ընդհանուր տերրիտորիայի 12 տոկոսը), այդ իսկ սլատճառով մենք առանձին խնամքով պիտի վերաբերվենք դեպի լեզած անտառային ֆոնդը, վորի դրական ազդեցությունը լերկիրի կլիմայի ու ջրային հարստության վրա չափանց մեծ է։

Շատ կարևոր ե անտառների շահագործումը դնել ուղիղնալ հիմքերի վրա, գլխավորապես ուշադրություն դարձնելով անտառանյութերի շինարարական և արդյունաբերական տեսակների վրա և ստեղծելով կանոնավոր շրջանառություն։ Թե այս ուղղությամբ և թե անտառային շինարարության վերաբերյալ (ճանապարհներ, նոր ծառատունկեր կտրածների փոխարեն, պահպանության միջոցներ և այլն) ևս հնգամյա պլանով նախատեսվում են վորոշ աշխատանքներ։

Ամփոփելով բոլորը զյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մասին կստանանք հետեւյալ արժեքային ընդգումարումները։ (Միլ. ռուբլի 26/27 թ. գնելով)։

	Բացարձակ		32 ₥. %/%	%/% առ գումար	
	1927	1932	Առ 27 ₥.	27 ₥.	32 ₥.
1. Հողագործություն	50,2 (52,6)	101,1	201,4 (191,9)	61,6 (62,7)	64,2
2. Կենդանաբուծություն	28,7	53,6	186,8	35,2 (34,2)	34,0
3. Անտառաբուծութ. ձեկ.				3,2	
Կորսութ. և վորսորդութ.	2,6	2,9	108,8	(8,1)	1,8
Հողամենը	81,5 (83,9)	157,6	198,4 (187,6)	100,0	100,0
Վարիչ՝	19,3		317,6	23,7	
Ապրանքային մասսան	(25,5)	61,3	(240,4)	(80,4)	38,9

Այստեղ ևս փակագծերում բերված թվերը  
վերաբերում են փաստացի բերքին, իսկ մյուս-  
ները՝ միջին բերքատվության դեպքի պայմա-  
նական բերքին։

Այսպիսով, առավելագույն աճում ունենա-  
լու յե հողագործության արտադրանքը և ապա-  
կենդանաբուծությունը, Ամբողջ գյուղատնտեսու-  
թյան ընդհանուր արտադրանքը գրեթե կրկնա-  
պատկերու յե, կամ ավելի ճիշտ աճելու յե 93,4  
(87,6) տոկոսով։ Միաժամանակ, ինչպես իր տե-  
ղում ցուց ենք տվել, բարձրանալու յե տեխնի-  
կական-հումույթալին և ապրանքային մասի տե-  
սակարար կշիռն ընդհանուր արտադրանքի մեջ։

Ապրանքային մասսայի աճութիւն իր թափով  
առաջ ե անցնում ընդհանուր արտադրանքի աճ-  
ման տեմպից, զորի հետևանքով վերջինիս ապ-  
րանքայնությունը 23,7 (30,4) տոկոսից հաս-  
նելու լե 38,9 տոկոսիւ:

Գյուղական բնակչության շնչահասութիւ  
նորմալի շարժումը հետևալ կերպ կարտահայ  
տվի — (ռուբլիներով 1 շնչին):

	27 թ.	32 թ.	82 թ. %
Հնդկանուր արտադրանք (116,5)	113,3	182,5	(156,5) 161,0
Ապրանքային մասսա (35,4)	26,8	71,0	(200,2) 264,7

Ուրեմն, մի շնչին համնող ընդհանուր ար-  
տադրանքի արժեքը բարձրանալու լե ավելի  
քան կիսով չափ, իսկ ապրանքային մասսաի  
շնչահասութիւ ավելի քան կրկնապատկվելու լե:

Այսպիսով, հնգամյա պլանը հաջողաբար լու-  
ծում և թե արտադրության և թե զյուղբնակ-  
չության բարեկցության մակարդակի բարձրաց-  
ման խնդիրը:

## 6 ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

Ինքնըսաինքլան հասկանալի լե, վոր հնգամ-  
յակում նորխառեսված գյուղատնտեսության վե-  
րակառուցման այս հսկայական աշխատանքների  
պլանի իրագործումը պահանջում և խոզոր նյու-  
թական միջոցներ:

Գյուղատնտեսության մեջ հնդամյակի ընթացքուն հիմնական կապիտալաներումների գումարներն արտահայտվում են հետևյալ թվերով, առանց ընթացիկ կարճատե վաշկավորման

	Միլ. ռուբ.	% առ գումար
Բուսաբուծություն	13,9	15,4
Կենդանաբուծություն	16,9	18,7
Ալ ներդրումներ	27,3	30,2
Հըլ. տնտեսություն	32,3	35,7
<hr/>		
Ընդամենը	90,4	100,0

Առանձնապես թվենք գլխավոր խոշոր ներդրումները. բուսաբուծությունից՝ դաշտամշակության մեջ—2,2 մ. ռ., ծխախոտամշակության—1,3, խաղող. և գինեգործության 4,0, պտղաբուծության ու բանջարաբուծության—0,8, պարարտացում 5,5 մ. ռ.:

Կենդանաբուծությունից՝ խոշոր լեղջ. անասնապահության —8,2 մ. ռ. բանող անասուն—5,4, վոչխարաբուծության—1,2, շերամապահության—0,7 մ. ռ.:

Այլ ներդրումներից՝ տարաբնակեցման ու գաղթեցման—5,7 մ. ռ., մեքենալացման—5,0, հողաշինարարության—4,8, խորհրդավին տնտեսությունների մոտ 9,1, փորձնական գործի—2,4, մ. ռ.: Առանձին ճյուղերի հաշվին գյուղա-

տնտեսության ինդուստրացմանը հատկացվելիք գումարը հասնելու յե 9,5 միլ. ռուբլու:

Զրային տնտեսության գծով ծախսվելիք գումարների խոշորագույն մասը — 18,3 միլ. ռուբլին գնալու յե Դոերի (առապարների) վորոգման աշխատանքների վրա. Բացի 6,1 միլ. ռ.ք. մանր աշխատանքներից մնացած գումարները ներդրվում են Փ. Սարդարաբադի ջրանցքի և Այզր-լճի ջրհանի (արդեն ավարտված ե) ու վորոգման սիստեմի կառուցումն ավարտելու համար (2,1 մ. ռ.) և Արազպայանի, Զանգիբառաբար — Մեծ ջրի և Մեծ Սարդարաբադի հողերի մելլորացիան (չորրացում ու վորոգումն) սկսելու համար (5,8 մ. ռ.):

Թե վորքան մեծ նշանակություն ե արվում ջրաշինարարական աշխատանքներին, կարելի յե յեղբակացնել նրանից, վոր ալդ ուղղությամբ ներդրվող գումարները կազմում են ընդհանուրի 85,7<sup>0</sup>/<sub>0</sub>, կամ 1/3 ել ավելի: Մնացած ներդրումները ևս չնշին բացառությամբ գնալու յեն հանրայնացված սեկտորի՝ խորհրդային, կոլեկտիվ տնտեսությունների, կոոպերացիալի ու պետական այլ ձեռնարկութերի գծով:

Ուրեմն, հեռանկարային հնգամյակում գլուխատնեսության մեջ կատարվելիք հիմնական ներդրումները հաշված են շուրջ 90 միլ. ռուբլի,

մինչդեռ նախորդ հնգամյակում Հայաստանի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ ներդրված կապիտալների գումարը այդ չափ ել չի յեղել, իսկ մասնավորապես գյուղատնտեսության կապիտալաներդրումները կազմել են միայն շուրջ 15 միլ. ռուբլի, ասել ե, նախորդ հնգամյակի դիմաց այժմյան ներդրումների չափը լինելու յե օ ոնդամ ավելի:

Այս համեմատությունները ցալտուն կերպով պատկերացնում են առաջիկայի կապիտալ աշխատանքների հոկայական մասշտաբն ու ծավալը:

Խիստ հետաքրքրական և իմանալ, վոր ար պատկառելի գումարները մեծ մասամբ ներդրովելու յեն հանրախացված միջոցներից, այն ե 81,5 միլ. ռուբլի, կամ 90,2 տոկոսը:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների կապիտալաներդրումները բաշխվում են հետևյալ կերպ:

Միլ. ռ.      % առ գումար

1. Պետական բյուջեն	42,2	46,7
2. Տեղական բյուջեն	0,8	0,9
3. Ցերկարատե վարկ	32,8	36,3
3. Կարճատե վարկ	3,2	3,5
5. Կոռուպերաց. և գլուխ զամնու. ձեռնարկ-կությունների սե-փակուն միջոցներ	2,5	2,8
6. Քլուղ. բնակչության	8,9	9,8
<hr/> Ընդամենը		90,4
		100,0

Ալստեղից դժվար չե յեզրակացնել, թե ինչպիսի նյութական ռժանդակություն ե ցուց տալիս պետությունը՝ գյուղատնտեսության վերելքն ու վերակառուցումն արագացնելու համար։ Միայն այսպիսի հուժկու լծակով կարելի կլինի ապահովել խորհրդային պետության գործոնն ներագումը գյուղատնտեսության վրա և այն վիթխարի նպատակագրութների կենսագործումը, վորոնք համարձակությամբ ու վճռականությամբ առաջադրված են հնգամյա պլանով։

Ճիշտ ե, պլանի ֆինանսական կողմը բավական լարված պիտի թվա, սակայն մեր առաջնառացած կարևորագույն ինդիքները հրամայողաբար պահանջում են մորիլիզացիալի լենթարկել բոլոր ուժերն ու կարողություները նրանց լիակատար լուծման համար։

\* \*

Ահա գյուղատնտեսության հնգամյա հեռանկարային պլանի գլխավոր մոմենտները,

Մենք տեսնում ենք, վոր բոլոր նախագծումները համապատասխանում են այն հիմնական դրույթներին, վորոնք ուղենչված են այս ճյուղի զարգացման համար՝ կոմմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության կողմից։ Հնգամյակի առաջին փուլն անցել ե արդեն։

Այժմ մենք հնարավորություն ունենք առաջին փորձերի հիման վրա վերանայելու միջանի նախատեսումներ։ Դրանց թվում կարևոր է հիշատակել ոեկոնստրուկտիվ ձեռնարկումների (Չրաշինարարություն, մեքենայացում, ինդուստրիացում) շրջանակների ընդարձակումը և հանրայնացման պրոցեսների (խորհրդ. տնտեսությունների շինարարություն, կոլեկտիվացում) ուժեղացումն ավելի մեծ մասշտաբով, քան այդ նախատեսված եր հնգամյա պլանի առաջին վարիանտով։

Այսպես որինակ, ջրալին տնտեսության մեջ կատարվելիք հիմնական ներդրումների գումարը 32,3 միլ ոռուբրուց հասցված է 43,6 միլ. ոռուբրու և դրա հետեանքով ջրովի հողերի աճումը 46,4 հազ. հեկտարի փոխարեն սահմանված է 60,5 հազ. հեկտ., վորից միայն բամբակի համար 29,9 հազ. հեկտ.։

Խորհրդային տնտեսությունների պլանը հիմնովին վերակազմվում է նրանց թիվը ու տարածությունն ավելացնելու և աերքիտորիալ տեղավորման տեսակետից։

Նույնը կատարվում է նաև կոլեկտիվացման պլանի նկատմամբ։ Նոր յենթադրությամբ նտխկին հնգամյա պլանը պիտի իրագործվի  $2\frac{1}{2}$  տարվա ընթացքում, իսկ հնգամյակի վերջում

պիտի կոլեկտիվացման յենթարկել ամբողջ գյուղացիական անտեսությունների վոչ թե  $17,2^0/_{\text{o}}$ , այլ մոտ  $40^0/_{\text{o}}$ .

Մեքենայացման պլանը միանգամայն ձևափոխվում է թե միջոցների ներածման բացարձակ չափով ու թե կազմակերպչական ձևերի և աշխատանքների սիստեմի բովանդակությամբ։ Բայ այսմ, այդ նպատակի համար հատկացվելիք գումարները կրկնապատկվելու յեն, սկզբնական յենթադրության համեմատությամբ։


Այս բոլորը գալիք են ասելու, վոր մենք ամբողջովին դեռ հաշվի չելինք առել հեղափոխական այն ունակությունները, թափն ու հնարավորությունները, վորոնք կարելի լի ու պիտի դրսենք գյուղատնտեսության ասպարիզում, նրա ռեկոնստրուկտիվ շրջանում։

Կյանքը մեզ ստիպում է ավելի արագացնել գյուղի սոցիալիստական վերակառուցումը լիովին գնահատելով հակայական նշանակություն ունեցող այս գործոնները, վորոնք մեր անփորձության չափավորության հետևանքով թերագնահատվել ելին պլան կտղմելու սկզբնական աշխատանքների ընթացքում։

Սրա հետ միասին անհրաժեշտ է վճռականապես դեն նետել աշխատանքի դանդաղաշարժ, պահպանօղական հին անպետք ձևերը և նոր մե-

թողներ կիրառելով, ստեղծագործական ունակությունների լիակատար հայտնաբերումով վոգեսրությամբ իրագործել գլուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հնգամյա պլանը, չենվելով զյուղի աշխատավոր մասսաների, մասնավորապես չքաջորության աճող ինքնագործունելության վրա, պիտի ել ավելի ամրացնել նրա դաշինքը քաղաքի պրոլետարիատի հետ:

Եերկրի ինդուստրացման ընդհանուր շահերը պահանջում են անհրաժեշտ հավասարակշռություն պահպանել զյուղատնտեսության և արագորեն աճող արդյունաբերության միջև: Զպիտք և մուսանալ, վոր նրանք գտնվում են ուղղակի կապակցության մեջ, վորոնց խզումը կամ խախտումը հիվանդագին կերպով կանդրադառնա համայն ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի վրա:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*b2*


I Գյուղաճնեսությունը միջին 1928 թ.


1. Նախապատերազմյան դրությունը և հետագա անկումը . . . . .	3
2. «Վերականգնման շրջան» . . . . .	10

II Գյուղաճնեսության 1928/29—32/33

հնգամյա ենուանկարները

1. Հնգամյա պլանի հիմնական դրույթները . .	17
2. Տերրիտորիալի կազմակերպումը (շրջանա- ցում, մելիորացիա, հողաշինարարություն)	21
3. Հանրախնացման պրոցեսոները (խորհրդավոր տնտեսություններ, կոլեկտիվիզացիա, գյուղ- կոոպերացիա) . . . . .	-
4. Մեքենայացում, ինգուստրիացում և ապբոկու- տուր ձեռնտրկումները . . . . .	40
5. Արտադրության եկամենտները (ցանքսերի տարածությունն ու անասունների քանակը թերքատվությունն ու անասունների արդյու- նավետությունը: Արտադրանքը) . . . . .	51
6. Հիմնական ներդրումները . . . . .	66





ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0038797

3835

ԳԻՒԸ 20 ԿՈՊ. ՄԱՍ. (2<sup>3</sup>/<sub>4</sub> մաս)



Гր. Саргсян

Пятилетний план сельского хозяйства ССРА

Госиздат ССР Армении  
Эревань—1930